5 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 153(5005)

Ազգ

Azg

ISSN: 1829-1651

# Ռուսաստանի հայերի միության հայտարարությունը

*Հունգարիայից Ադրբեջանին մարդասպան Ռ. Սաֆարովի արտահանձնման եւ նրա ներման կապակցությամբ*

**Ռուսաստանի հայերի միությունը վրդովմունքով ընդունեց այն ցնցող լուրը, որ Ռամիլ Սաֆարովը Հունգարիայից (որտեղ նա ցմահ բանտարկության էր դատապարտված հայ սպա Գուրգեն Մարգարյանի չարանենգ սպանության համար) արտահանձնվել է Ադրբեջանին, որի իշխանությունները ցինիկորեն ներում են շնորհել եւ հերոսացրել են ոճրագործին:**

**Միջազգային իրավունքի եւ համամարդկային բարոյականության սկզբունքները ոտնահարող այդ գործողություններով Ադրբեջանի ղեկավարությունը ողջ աշխարհին ցուցադրեց իր հանցավոր էությունը, որը ներհակ է հիմնարար մարդասիրական սկզբունքներին, որոնք գործունեության հիմքն են ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ԱՊՀ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների, որոնց անդամակցում է այդ երկիրը:**

**Ռուսաստանի հայերի միությունը լրիվին պաշտպանում է տվյալ հարցի առթիվ Հայաստանի Հանրապետության Նախագահի դիրքորոշումը, որը նա շարադրեց օտար պետությունների դեսպանների հետ հանդիպման ժամանակ, մասնավորապես՝ Հունգարիայի հետ դիվանագիտական հարաբերությունների կասեցմանն առնչվող նրա հայտարարությունը:**

**Այս ամենը մեկ անգամ եւս ակներեւորեն ցույց տվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի ընտրության արդարացիությունը, որն անհնար է համարում սեփական ճակատագիրը կապել մի երկրի հետ, որը ոչ միայն պետական մակարդակով աջակցում է մարդասպանին, այլեւ սպանության համար ցմահ դատապարտված չզղջացող ոճրագործին դարձնում է ընդօրինակման արժանի ազգային հերոս:**

**Այս կապակցությամբ Ռուսաստանի հայերի միությունն անհրաժեշտ է համարում.**

**1. Ռուսաստանի Դաշնության՝ որպես Հայաստանի ռազմավարական դաշնակցի ղեկավարությանը կոչ անել արտահայտելու սեփական դիրքորոշումը Հունգարիայի իշխանությունների որոշումների նկատմամբ եւ դատապարտելու Ադրբեջանի ղեկավարության անօրինական ու ցինիկ գործողությունները, որոնք սպառնալիքի տակ են դնում Հարավային Կովկասում հաշտության ու համաձայնության հասնելու ԵԱՀԿ Մինսկի խմբի բազմամյա ջանքերը:**

**2. Ադրբեջանի իշխանությունների կողմից Ռ. Սաֆարովի հանցավոր արարքների հերոսականացումը նման ոճիրների ընդհանուր տարածման իրական վտանգ է պարունակում, ուստի Ռուսաստանում գործող քաղաքական, հասարակական, իրավապաշտպանական, կրոնական եւ մյուս կազմակերպությունների ու կառույցների ներկայացուցիչներին կոչ ենք անում հրապարակավ բարոյական եւ իրավաքաղաքական գնահատական տալ Ադրբեջանի ղեկավարության գործողություններին:**

**3. Ռուսաստանի հայերի միության տարածաշրջանային բաժանմունքներին եւ Ռուսաստանի Դաշնությունում ապրող մեր բոլոր հայրենակիցներին հորդորել ստեղծված պայմաններում հանդես բերել զսպվածություն, համախմբվածություն, չենթարկվել ամեն տեսակ սադրանքներին եւ բոլոր հանգամանքներում իրենց մեջ պահպանել այն բարձր բարոյական ոգին, որը միշտ ներհատուկ է եղել մեր ժողովրդին:**

**1 սեպտեմբերի, 2012 թ.**

# Նախագահ Սարգսյան. «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը մեզ թշնամի կուսակցություն չէ եւ ոչ էլ հակառակորդ

Նախագահ Սարգսյանը երեկ աշխատանքային այցով Շիրակում էր եւ մասնակցել է Գյումրիի՝ ժամանակակից չափանիշներին համապատասխան կառուցված բազմապրոֆիլ բուժկենտրոնի բացման արարողությանը: Այս կենտրոնի կառուցումն ու սարքավորումը Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի շրջանակում են, որը համաֆինանսավորում է Հայաստանի կառավարությունը:

Նախագահին այցելել է նաեւ Գյումրիի «Մոր եւ մանկան ավստրիական հիվանդանոց», որտեղ ավելի վաղ եւս այցելել էր եւ խոստացել խնդիրների լուծում: Այս հիվանդանոցը եւս նորոգվել է կարճ ժամանակում եւ հագեցել ժամանակակից սարքավորումներով:




Մանրամասների մեջ չխորանալով անդրադառնանք Նախագահ Սարգսյանի՝ շրջայցից հետո լրագրողների հարցերին տված պատասխաններին, ուր մի շարք, այդ թվում՝ քաղաքական, գնահատականներ են հնչել: Անդրադառնալով ադրբեջանցի մարդասպանին ազատ արձակելուց եւ Հայաստանի կտրուկ արձագանքից հետո զարգացումներին՝ Նախագահ Սարգսյանը նշել է, որ այս ուղղությամբ հետեւողական, հաշվենկատ եւ սթափ շարունակելու են աշխատել ինչպես գործընկերային հարաբերություններում, այնպես էլ միջազգային ատյաններում՝ այդ մասին պարբերաբար տեղյակ պահելով մեր հասարակությանը. «Բայց օգտվելով առիթից՝ ես ուզում եմ դիմել մեր հասարակությանն ու հատկապես երիտասարդներին եւ խնդրել, որ նրանք չայրեն Հունգարիայի դրոշը, որովհետեւ Հունգարիայի դրոշը Հունգարիայի իշխող կուսակցության դրոշը չէ, Հունգարիայի դրոշը Հունգարիայի վարչապետի խորհրդանիշը չէ:

*Տես էջ 2*

# Ոչ թե Հայաստանը, այլ Ադրբեջանն է փորձեր անում դուրս գալու բանակցություններից

*Ըստ Հայաստանի արտգործնախարարի*



**Հունգարիայի կողմից Սաֆարովի արտահանձնումն ու Ադրբեջանում ներում շնորհելը շատ վատ ազդեցություն ունեն արդեն բանակցային գործընթացի եւ ընդհանրապես տարածաշրջանային կայունության եւ անվտանգության վրա: Այդ մասին սեպտեմբերի 4-ին հայտարարել է Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Արգենտինայի ԱԳ նախարար Հեկտոր Մարկոս Թիմերմանի հետ համատեղ ասուլիսում: «Բայց փորձերը՝ դուրս գալ բանակցություններից, ձախողել բանակցությունները՝ Հայաստանի կողմից չեն արվում, Ադրբեջանի կողմից են արվում, եւ այս գործարքի հենց պատճառներից մեկը նա է, որ Ադբեջանը շարունակում է այդ փորձերը: Ադրբեջանն է, որ մերժում է եռանախագահների բոլոր առաջարկները: Գիտեք մեր արձագանքը Լ'Աքվիլայի, Մուսկոկայի, Դովիլի, Լոս Կաբոսի հայտարարություններից հետո եւ Ադրբեջանի արձագանքը: Դուք գիտեք մեր արձագանքը այն առաջարկների կապակցությամբ, որոնք արվել են եռանախագահների, ԵԱՀԿ գործող նախագահների, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից՝ դիպուկահարների դուրսբերման, հրադադարի ամրապնդման, շփման գծում հրադադարի խախտման հետաքննության մեխանիզմի ստեղծման վերաբերյալ, այլ առաջարկներ, որոնք մշտապես մերժվել են Ադրբեջանի կողմից»: Նա նշել է, որ Ադրբեջանն է հենց վերջին տարիներին իր ռազմատենչ պահվածքով, սադրանքներով սահմաններին եւ սպառնալիքներով նպաստում բանակցությունների տապալմանը. «Ամենակարեւորը նա է, որ միջազգային հանրությունը չպետք է հանդուրժի, որ Ադրբեջանը բանակցային գործընթացի քողի տակ շարունակի այս արկածախնդիր քաղաքականությունը, որը հղի է լուրջ վտանգներով տարածաշրջանի եւ ոչ միայն տարածաշրջանի, այլեւ միջազգային անվտանգության եւ կայունության համար», ասել է Հայաստանի ԱԳ նախարարը:**

# Կոմանդոսը կոչ է անում տուրք չտալ սադրանքներին եւ առաջին քայլով ճանաչել ԼՂՀ-ն

Երեկ լրագրողների հետ հանդիպմանը Արցախի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանը (Կոմանդոս), մեջբերելով 1919-ին Ադրբեջանի ու Թուրքիայի միջեւ կնքված համաձայնագիրը, ըստ որի Ադրբեջանը չի կարող արտաքին քաղաքական քայլ կատարել առանց Թուրքիայի իմացության, ասաց. «Ադրբեջանն ու Թուրքիան այսօր էլ ունեն ծրագրած քայլեր, թե որից հետո ինչ են անելու: Այժմ նրանք ուշադիր նայում են, թե Հայաստանում ինչ է կատարվում, որ պաշտոնյան ինչ է ասում, որպեսզի օգուտներ քաղեն: Ասեմ, որ Սաֆարովին կարող են սպանել հենց Ադրբեջանի հրահանգով, բայց ամբողջ աշխարհին հայտարարեն, թե դա արվել է Հայաստանի պատվերով: Նրանք իրենց հարցերը լուծելու համար պատրաստ են ամեն քայլի: Իսկ Հայաստանը չպետք է թույլ տա, որ Ադրբեջանը սուտն ու պրովոկացիան օգտագործի իր հեղինակությունը բարձրացնելու համար»: Պատերազմի վերսկսման պարագայում Կոմանդոսի կարծիքը անփոփոխ է. «Եթե կռիվ լինի, մեծ կորուստներ կլինեն, բայց հաղթանակը մերը կլինի», վստահեցնում է անհնարին թվացող Շուշիի ազատագրումը ղեկավարած Արցախի հերոսը եւ ընդգծում. «Այսօր Հայաստանն իր առաջին քայլով պետք է ճանաչի ԼՂՀ-ի անկախությունը»:

**Հ. Ս.**

# Սահմանից այն կողմ կացին կա, զգույշ...

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

Բաքվում՝ Հունվարի 20 փողոցում կողոպտիչը երեկ դանակահարել է ոստիկանին: Հավանաբար Իլհամ Ալիեւը շուտով անձնական ընդունելության կարժանացնի «ազգի նոր հերոսին», կպարգեւատրի «ազգի նոր խորհրդանիշ» դարձած կացնով եւ կտա խիստ կարեւոր պետական հանձնարարություն...

Թողնենք հարեւաններին, մանավանդ որ, ինչպես ՀՀ նախագահն է ասում. «Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա ես ոչինչ չունեմ ասելու, ուղղակի ոչինչ չունեմ: Այդ երկիրն իր քայլերով արդեն իսկ խոսում է իր մասին»: Խոսենք մեր մասին. այսօր ՀՀ ԱԺ-ն Սաֆարովի արտահանձնման, այնուհետեւ ներման կապակցությամբ արտահերթ նիստ է գումարում՝ օրակարգում ունենալով մի հարց՝ իրադարձության վերաբերյալ ընդունել հայտարարություն: Ի՞նչ տեքստ կլինի, ավելի ճիշտ, կլինի՞ արդյոք այնտեղ ԼՂՀ անկախությունը ճանաչելու վերաբերյալ ՀՀ հայտարարություն:

ԱԺ-ում ՀՅԴ խմբակցության քարտուղար **Աղվան Վարդանյանը**, որը երեկ հանդիպեց լրագրողներին, «էթիկայի առումով անընդունելի» համարեց այդ հայտարարության տեքստի վաղաժամ հրապարակայնացումը, քանի որ ԱԺ-ն հավաքական մարմին է: Վարդանյանը միայն նշեց, որ այս պահին խորհրդարանական խմբակցությունները համաձայնեցնում են հավաքական հայտարարությունը: Ամենայն հավանականությամբ այդ հայտարարությունը կլինի պարզապես կոչ այլ երկրների խորհրդարաններին՝ հրավիրելու նրանց ուշադրությունն այս իրադարձությանը՝ օտարերկրյա խորհրդարանների կողմից հունգարա-ադրբեջանական այս գործարքը դատապարտելու ակնկալիքով:

Հայաստանը խորհրդարանական մակարդակով հազիվ թե այսօր ճանաչի Արցախի անկախությունը, չնայած հազիվ թե լինի մեկ պատգամավոր, որը չի ցանկանա դա եւ դժվար թե հայտարարի, թե ՀՀ-ն հետայսու եւ անորոշ ժամկետով դուրս է գալիս «նման Ադրբեջանի» հետ բանակցություններից: Այս վերջինը, եթե հայկական կողմը հայտարարի, ապա, թվում է, միայն նախագահի մակարդակով ու համապատասխան ուղերձով: Կարձագանքե՞ն աշխարհի խորհրդարանները ԱԺ-ի կոչին: Նախ նկատենք, որ եթե անգամ չարձագանքեն կամ ցանկալի մասշտաբներով ու տերմիններով չարձագանքեն, այդ հայտարարություն-կոչն ուղղակի անհրաժեշտ է:

*Տես էջ 3*

ԱԶԳ

# Ընթացիկ

# Եկեղեցու փակ դռների մոտ

Ինչ է զգում մարդը, երբ հավատքի տան դռներն իր առջեւ փակ է տեսնում: Վատ նշան է, կմտածի սնահավատը, Աստծո կամքն է, կասի հավատացյալը, հենց այնպես, պարզապես այցելուի մտքով ոչինչ էլ չի անցնի, որովհետեւ եկեղեցին էլ, աշխարհիկ մնացած ծառայությունների պես աշխատանքային իր ժամերն ունի, կասի, կշրջվի ու կգնա:

Ծաղկաձորը Հայաստանի հանգստի գոտիներից ամենահայտնին է ու զբոսաշրջության վայր է համարվում: Այս փոքրիկ քաղաքը աչքի է ընկնում ներկայանալի մի քանի հյուրանոցներով («Կեչառիս», «Ռոսիա», «Յուպիտեր»), մի շարք ռեստորան-խորտկարաններով, բացօթյա սրճարաններով: Քաղաքի կենտրոնը Ծաղկունյաց կոչվող շրջանաձեւ հրապարակն է, մի քանի նստարաններով, հաշված ծառերով, օրվա գրեթե բոլոր ժամերին անջուր շատրվանով, կոմպոզիտոր Ալեքսեյ Հեքիմյանի կիսանդրիով եւ նորերս տեղադրված կրկեսի հայտնի արտիստ, ծաղրածու Լեոնիդ Ենգիբարյանի մի խեղճ արձանով. ճիշտ նույն զգացողությունը, ինչ Երեւանինն է:

Իհարկե, Օրբելի եղբայրների տուն-թանգարանը Ծաղկաձորի գուցե թե միակ նշանավոր մշակույթի օջախն է:

Քաղաքի շքեղությունը, սակայն, միջնադարի հայ ճարտարապետական գոհարն է, XI դարի Կեչառիսի վանական համալիրը՝ վերանորոգված եւ շրջակայքը բարեկարգված: Եվ յուրաքանչյուր այցելու՝ հանգստացող թե զբոսաշրջիկ, անպայման գոնե մեկ անգամ այցելում է եկեղեցական համալիր:

Շոգը այս ամառ Երեւանում ավելի էր սաստկացել: Մի քանի օրով շոգից փախածներս՝ Ծաղկաձորի անտառների զովին ապավինած, ցերեկներն, այնուամենայնիվ, այստեղ էլ արեւահարվելուց խուսափում, տնից դուրս չէինք գալիս, սպասում էինք՝ օրը երեկոյանա, արեւը մայր մտնի:

Հայոց պատմության դժվարին հարյուրամյակների միջով անցած Կեչառիսի վանական համալիրը ճարտարապետական նշանավոր կոթողներից է եւ պատահական չէ, որ իր կողմն է հրավիրում յուրաքանչյուր անցորդի ուշադրությունը: Օրվա տարբեր ժամերին Կեչառիսը տարբեր խորհուրդ ունի: Ընտրեցինք երեկոն: Մի տարեց կին թոռան ձեռքը բռնած եկեղեցու հենց դարպասներից հետ է դառնում՝ քթի տակ ինչ-որ բան ասելով: Մենք մտնում ենք եկեղեցու բակ, մոտենում կենտրոնական դռանը, փակ է, դուռն ամուր կողպված, փակ են դռները նաեւ մյուս եկեղեցիների: Հենց մուտքի մոտ, դարպասներին կից հուշանվերների խանութը, սակայն, բաց է,



վաճառքում՝ հոգեւոր գրականություն, պաստառներ, օրացույցներ, սրբանկարներ, քրիստոնեական հավատքի խորհրդանշաններով հուշանվերներ, խաչքարեր, ծանոթ իրեր: Ներսում ասացին, որ եկեղեցին աշխատանքային ժամեր ունի՝ առավոտյան 9-ից մինչեւ 19.30: Երեսուն րոպե արդեն անց էր, եկեղեցին «աշխատանքային օրն» ավարտել էր, բայց հուշանվերների խանութը դեռ բաց էր, կիսատ գործեր կային... Եկեղեցու դռները փակում են, որովհետեւ թանկարժեք իրեր, գորգեր կան ներսում:

Առաջին անգամ եկեղեցի գնալիս, դռները փակ գտա: Սնահավատ չեմ, ոչ էլ մոլեռանդ հավատացյալ, խորապես գիտակցողն եմ քրիստոնեական արժեհամակարգի. արագ վանեցի մոտեցող մռայլ մտքերը... Հիշեցի տարիներ առաջ, երբ այս նույն վանական համալիր այցելեցինք լրագրող-մտավորականների մի խմբով, նաեւ արտասահմանցի թղթակիցների ընկերակցությամբ, շատ ուշ ժամ էր, գրեթե կեսգիշերն անց, բայց դռները փակ չէին: Խորհրդավոր պահեր ապրեցինք: Հիշեցի բժիշկ-բարեկամիս, այժմ Կանադա տեղափոխված, թե որքան էր վշտացել ու զարմացել, երբ Անգլիայից ժամանած հյուրերի հետ Երեւանից մեքենայով Հաղպատի վանքը տեսնելու էին գնացել, տեղ էին հասել երեկոյան ու եկեղեցու դռները, ցավոք, փակ գտել:

Կեչառիսի դարպասներից դուրս գալուց հայացքս հարեւանցի ընկավ պատի փորագիր գրություններին. վանական համալիրի վերանորոգման մասին մանրամասն տեղեկություններ էին՝ ռուսերենով եւ անգլերենով: Հայերենը իզուր էի փնտրում:

Կամաց-կամաց մթնում էր: Լուսնի գունատ ուրվապատկերը սպասում էր իր ժամին, երբ անտառը կվերածվի համասեռ մուգ զանգվածի, եւ ինքը դանդաղ կլողա ծառերի գագաթներին շատ մոտ, ասես քսվելով՝ տարածելով խորհրդավոր արծաթափայլը սառը մոլորակի:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Նախագահ Սարգսյան. «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը մեզ թշնամի կուսակցություն չէ եւ ոչ էլ հակառակորդ

*1-ին էջից*

Մենք հարյուրավոր տարիներ շատ լավ, բարի հարաբերություններ ենք ունեցել հունգարացիների հետ: Բազմաթիվ հայորդիներ իրենց կյանքը տվել են Հունգարիայի ազատության, անկախության համար, հասել են բարձր դիրքերի, մեծ նվաճումներ են ունեցել, եւ մեկ մարդու կամ մի կուսակցության, մի կառավարության տմարդի արարքը չպետք է հիմք դառնա, որ մենք թշնամանանք հունգարացիների հետ: Սա է իմ խնդրանքը մեր հանրությանը, մեր երիտասարդներին: Իհարկե, կարելի է բողոք արտահայտել, բայց այդ ընթացքում մենք չպետք է դավաճանենք ինքներս մեզ ու մեր արժեքներին»:

Լրագրողներից մեկը առաջիկա կիրակի սպասվող Գյումրիի քաղաքապետի ընտրությունների վերաբերյալ այն հարցին, թե ինչու ՀՀԿ-ն սեփական թեկնածուով չի գնում ընտրությունների, Սերժ Սարգսյանը հակադարձել է. «Իսկ ո՞վ է ասել, որ Սամվել Բալասանյանը օտար մարդ է: Եվ ի՞նչ է նշանակում, ընդհանրապես, սեփական թեկնածու: Գիտեք, այս առիթով ես ուզում եմ, որ մեկ անգամ եւս անդրադառնանք վերջին շրջանում տարբեր ժարգոններով հրապարակվող նյութերին՝ հենց այս «սեփական», «օտար», այսպես ասած՝ «դաբրո», «զամրես» տերմիններին: Ուզում եմ, որ բոլորի համար պարզ, հասկանալի լինի, որ կուսակցությունները ստեղծվում են նրա համար, որպեսզի կարողանան ակտիվորեն մասնակցել քաղաքական կյանքին: Մարդիկ մտնում են կուսակցություններ, որպեսզի իրենք եւս ակտիվորեն մասնակցեն քաղաքական իրադարձություններին: Իսկ ընտրություններից առավել քաղաքական իրադարձություններ չեն կարող լինել: Ուստի բնական է, որ կուսակցությունը, կուսակցության ղեկավար մարմինը կամ կուսակցության ղեկավարը պետք է սատարի կոնկրետ կուսակցականի կամ կոնկրետ անհատի: Սա՝ այս մասով: Այո՛, իրականությանը համապատասխանում են մամուլի այն պնդումները, որ Սամվել Բալասանյանին ես եմ առաջարկել առաջադրվել քաղաքապետի թեկնածու: Այո՛, դա այդպես է: Նախ համարում եմ, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը մեզ թշնամի կուսակցություն չէ եւ ոչ էլ հակառակորդ: Մենք աշխատում ենք ընդհանրապես կայացնել արդյունավետ որոշում, օպտիմալ տարբերակ եւ եթե որեւէ տեղ առաջադրում ենք թեկնածու, ապա ծանրութեթեւ ենք անում, նկատի ունենք, իհարկե, խոշոր համայնքները, եւ, հաշվի առնելով բոլոր «թեր» ու «դեմ»-երը, նոր միայն առաջադրում ենք քաղաքապետի թեկնածու: Կոնկրետ պարագայում, իմ կարծիքով, Սամվել Բալասանյանը լավագույնս կարող է լուծել այս համայնքում առկա խնդիրները: Նախ մթնոլորտը պետք է փոխվի Գյումրիում, եւ կարծում եմ, որ Սամվել Բալասանյանը կարող է այդ մթնոլորտը փոխել», ասել է Հայաստանի նախագահը:

Ս. Խ.

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ

# Գերմանահայոց առաջնորդարանի նամակը ԳԴՀ կառավարությանը, քույր եկեղեցիներին

Գերմանահայոց առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը սեպտեմբերի 3-ին նամակով դիմել է ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկելին, արտգործնախարար Գուիդո Վեստերվելլեին՝ մտահոգություն հայտնելով ադրբեջանցի մարդասպան Ռամիլ Սաֆարովին Հունգարիայից Ադրբեջանին արտահանձնելու եւ ներման արժանացնելու առնչությամբ՝ խնդրելով հրապարակել գերմանական կառավարության պաշտոնական հաղորդագրությունն այս առնչությամբ:

Արքեպիսկոպոսը գրավոր դիմել է նաեւ Կաթողիկե եկեղեցու եպիսկոպոսաց ժողովին, Ավետարանական եկեղեցու խորհրդին, Ուղղափառ եկեղեցիների եպիսկոպոսաց ժողովին, Գերմանիայի միջեկեղեցական շարժման նախագահությանը՝ հայտնելով, թե ուրախ կլինեք, եթե նրանք համապատասխան պաշտոնական գրությամբ դատապարտեին այդ գործելակերպը, արդարության եւ բարոյական չափանիշների ոտնահարումը, որ բացասաբար է անդրադառնում խաղաղության հասնելու առանց այն էլ փխրուն գործընթացի վրա, բարդացնելով ԼՂ խնդրի խաղաղ լուծման փնտրտուքները:

Ավելի վաղ Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը, Ցեղասպանության ճանաչման աշխատանքային հանձնախումբը, դատապարտելով Հունգարիայի եւ Ադրբեջանի գործելակերպը, կոչ էին ուղղել գերմանահայությանը՝ սեպտեմբերի 8-ին՝ ժամը 15-16.30-ը ի նշան բողոքի հսկում եւ ցույց անցկացնել Բեռլինում Հունգարիայի դեսպանության առջեւ: Սեպտեմբերի 1-ին Րաֆֆի Քանդյանը իր խմբագրած «Հայ-գերմանական նամականի» գերմանա-հայկական ընկերակցության պաշտոնաթերթի էլեկտրոնային տարբերակում ծավալուն անդրադարձել էր կատարված ապօրինությանը՝ կից զետեղելով ՀՀ արտգործնախարարության, Բեռլինում ՀՀ դեսպանության հայտարարությունները:

Ան. Հ.,
Գերմանիա

# Գագիկ Ծառուկյանը՝ արտահանձնման մասին

«Ադրբեջանն իր կատարած քայլով վարկաբեկեց ինքն իրեն ոչ միայն Հայաստանի ու հայ ժողովրդի, այլեւ ամբողջ աշխարհի եւ մարդկության առջեւ: Եթե նրանք կարողանում են քնած մարդուն սպանողին սարքել ազգի հերոս, դա արդեն խոսում է տվյալ երկրի մտածելակերպի մասին: Աշխարհը գիտի, որ պատերազմում հաղթողը մենք ենք եղել: Հաշվի են նստում ուժեղի, հզորի հետ: Դրա համար պետք է մենք կարողանանք ուժեղ լինել, որ խաղաղ պայմաններում մեր բոլոր խնդիրները լուծենք, բոլորն էլ կարողանան բարեկեցիկ կյանքով ապրել, իրենց երջանիկ զգան՝ իրենց ընտանիքում, իրենց առօրյայում եւ գործում», ասել է երեկ ԲՀԿ առաջնորդ **Գագիկ Ծառուկյանը**՝ անդրադառնալով ադրբեջանցի մարդասպանի արտահանձնմանը:

# «Արմնյուզն» ու «Ա1+»-ը համագործակցում են

«Արմնյուզ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն **Արտակ Ալեքսանյանը** երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ տեղեկացրեց, որ «Արմնյուզ» եւ «Ա1+» հեռուստաընկերությունները համագործակցելու են: Սեպտեմբերի 10-ից շաբաթական 5 օր՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 21.00-ից, «Ա1+»-ը իր լրատվական հաղորդմամբ կլինի «Արմնյուզի» եթերում:

Ըստ Արտակ Ալեքսանյանի՝ «Ա1+»-ն իր հեռուստահաղորդումը պատրաստելու է ինքնուրույն, եւ «Արմնյուզը» հաղորդման խմբագրական աշխատանքներին չի միջամտելու:

«Ա1+» հեռուստաընկերության նախագահ Մեսրոպ Մովսիսյանի փոխանցմամբ՝ 2 հեռուստաընկերությունների միջեւ համագործակցության պայմանագիրը կնքվել է մի տարով:

«Արմնյուզի» եթերով «Ա1+»-ի հաղորդման հեռարձակումը, սակայն, չի նշանակում, որ «Ա1+»-ի դատական գործընթացն ընդդեմ Հեռուստատեսության ու ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) չի շարունակվելու, դատական գործընթացը կշարունակվի, բայց դա չի խանգարի աշխատանքային միջավայր ստեղծելուն:

Ի. Պ.

# «Ապարեզ» ակումբը դատապարտում է

Երեկ Գյումրի կատարած այցի ժամանակ նախագահ Սերժ Սարգսյանի աշխատակազմը արգելել է նախագահի տված հարցազրույցին մասնակցել տեղի զանգվածային լրատվամիջոցների մի շարք ներկայացուցիչների:

Լրագրողների «Ապարեզ» ակումբի փոխանցմամբ՝ մինչ նախագահը կժամաներ նորակառույց հիվանդանոցի բացմանը, Գյումրու լրագրողներին տեղեկացրել են, որ հանրապետության նախագահի հետ հարցազրույց նախատեսված չէ, սակայն հարցազրույց եղել է հենց հիվանդանոցի ներսում՝ մասնակցությամբ երեւանյան լրատվամիջոցների լրագրողների եւ «Շանթ», «Հ1» հեռուստաընկերությունների Գյումրու թղթակիցների:

«Ապարեզ» ակումբը դատապարտում է տեղացի լրագրողների նկատմամբ նման վերաբերմունքն ու գնահատում այն որպես խտրականություն նույն մասնագիտության ներկայացուցիչների նկատմամբ:

Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ռամիլ Սաֆարովը՝ ընդդեմ իր «դասապաշտպանների»

1news.az-ը փորձել է հակազդել հայկական կողմի հիմնավոր փաստարկներին, որ Ռամիլ Սաֆարովը Գուրգեն Մարգարյանին սպանել է միայն էթնիկ ատելության հողի վրա: «Եթե տուժողի էթնիկ պատկանելությունը լիներ սպանության իրական մոտիվը, ապա Ռամիլը հարկ չէր ունենա այդքան հեռու՝ Եվրոպա գնալու: (Ուրեմն նա Եվրոպա էր գնացել հատուկ հայ սպանելո՞ւ նպատակով - Վ. Ա.) Բաքվում առ այսօր շատ հանգիստ տասնյակհազարավոր հայեր են ապրում (մեկին կարո՞ղ են ցույց տալ - Վ. Ա.): Մեր հայրենակիցը ոչ քիչ հայերի է հանդիպել նաեւ Իզմիրում, որտեղ սովորում էր: Ինչո՞ւ հայի սպանել եւ ընկնել հունգարական բանտ, եթե կա թուրքականը (սպառնալիք չէ՞ Թուրքիայում ապրող հայերի հասցեին - Վ. Ա.)»:

Մեկ այլ լրատվամիջոց՝ vesti.az-ը, մեջբերում է Սաֆարովի դատական ցուցմունքից այս հատվածը. «Ինձ այդ դասընթացներին ուղարկել է Ադրբեջանը, եւ ես այստեղ (Բուդապեշտում - Վ. Ա.) իմացել եմ, որ մեզ հետ երկու հայ կա: Ասեմ, որ իմ մեջ հայերի դեմ ծնվեց ատելություն: Սկզբում դեռ բարեւում էինք իրար, այսինքն նրանք բարեւում են «հայ» ասելով, բայց ես նրանց չէի պատասխանում, եւ հետաքրքրական է, որ երբ նրանք անցնում էին իմ կողքով, ապա ինչ-որ բան էին քրթմնջում հայերեն եւ ինձ նայելով՝ ժպտում: Այդ պահին ես որոշել եմ նրանց սպանել, այսինքն՝ կտրել նրանց գլուխները (առավոտյան) ...»:

Ինչպես տեսնում ենք, հանցագործը հունգարական դատարանին խոստովանել է, որ տեսնելով հայ սպաներին, իր մեջ «հայերի հանդեպ ատելություն է ծնվել», իսկ երբ նրանք իր մոտից անցնելով «ինչ-որ բան են քրթմնջացել եւ իր երեսին ժպտացել», ապա ինքը նույն պահին որոշել է նրանց սպանել, այսինքն՝ գլուխները կտրել առավոտյան: Ադրբեջանի դրոշի վրա «բարձրացված ձեռքի» կամ այդ փալասով ոտքեր մաքրելու մասին, ինչի շուրջը մտավարժանքներ է արել Բաքվի լրատվամիջոցը, մարդասպանը դատարանին ոչինչ չի ասել:

Զափազանց ուշագրավ է, որ դատական ցուցմունքում հանցագործը նույն կոնտեքստում է դրել Ադրբեջանի կողմից իրեն դասընթացների ուղարկելու եւ երկու հայ սպայի մասին իմանալու հանգամանքը: Հանցագործները սովորաբար ձգտում են փաստերը միմյանցից տարանջատել: Սաֆարովը, մինչդեռ, հունգարական դատարանին կարծես փորձել է հասկացնել, որ Ադրբեջանից իրեն դասընթացներին են ուղարկել՝ իմանալով, որ դրանց մասնակցելու է նաեւ երկու հայ սպա: Եվ նա մտադրված է եղել երկուսին էլ սպանել՝ «կտրելով նրանց գլուխները», ինչպես եւ դատարանում խոստովանել է:

Տեքստի շարունակությանը հետեւելու անհրաժեշտություն չկա: Հանցագործի դատական ցուցմունքն ամեն ինչի մասին վկայում է. նա կատարել է իր պետությունից ստացած «մարտական առաջադրանք»: Այդ է վկայում եւ ներման արժանանալու, եւ զինվորական ավելի բարձր կոչում ստանալու, եւ նյութապես ապահովվելու հանգամանքը: Պետությունը, կառավարությունը նման ընդունելության արժանացնում է կարեւորագույն հետախույզին կամ հատուկջոկատայինին:

Բայց այստեղ կա մի նրբություն. բարձրակարգ հետախույզը կամ վրիժառուն ամենածանր իրավիճակում իսկ իր պետության, կառավարության գաղտնիքները չի մատնում: Սաֆարովը հույս չի ունեցել, որ Իլհամ Ալիեւը կկանգնի իր թիկունքին: Դրա համար էլ հունգարական դատարանին գրեթե խոստովանել է, որ կատարել է Ադրբեջանից ստացած պետական առաջադրանքը: Եվ Իլհամ Ալիեւը շատ լավ հասկացել է, որ նա մի օր կարող է «թռչնակի պես երգել»: Այդ իսկ պատճառով դիմել է ամենավերջին խարդախություններին, որպեսզի մարդասպանին օր առաջ վերցնի իր հուսալի հսկողության տակ:

Այդուհանդերձ, Սաֆարովի փորձությունը, որ դրսեւորվել է դատարանում, դամոկլյան սուր է՝ Իլհամ Ալիեւի գլխին: Մարդասպանը սեփական ցուցմունքներով ընդդիմանում է իր «դասապաշտպաններին»: Կարելի է վստահաբար ասել՝ Իլհամ Ալիեւի թիվ մեկ թշնամին այսօր Ռամիլ Սաֆարովն է: Կատարյալ «հերոսացնելու, շեհիդների կարգին դասելու» համար Իլհամ Ալիեւը կհրամայի ոչնչացնել նրան: Որպեսզի «թռչնակը» հավիտենապես լռի:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Սահմանից այն կողմ կացին կա, զգույշ...

*1-ին էջից*

Մյուս կողմից՝ իրադարձության հենց նույն օրը՝ երեկոյան, ՀՀ նախագահն իր նստավայր հրավիրեց Երեւանում աշխատող ՄԱԿ-ի անդամ պետությունների դիվանագիտական ներկայացուցիչներին եւ մեր երկրում ներկայացված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին: Նախագահը նրանց դիմեց կոչով ու խնդրեց այն «ամենաշտապ կերպով» փոխանցել «ձեր երկրների ղեկավարներին», ընդ որում՝ Սերժ Սարգսյանն իր այդ ելույթում մի խիստ ուշագրավ դիտարկում արեց. «Տեղի ունեցածի հանդեպ գործողությունների հիման վրա ենք մենք դատելու հայ ժողովրդի անվտանգության հանդեպ մեր գործընկերների վերաբերմունքի մասին»:

Այսքանից հետո ՀՀ նախագահի կոչին արձագանքեցին մի քանի երկրներ միայն, եւ նրանցից եզակիներն էին, որ հանդես եկան դատապարտման դիրքերից: Հետեւաբար պետք է խոստովանենք, որ արտաքին ազդեցության խնդիր ունենք, պետք է սա առանց ամաչելու խոստովանենք եւ որպես անելիք որդեգրենք: Այո, միջազգային մամուլն ու հասարակությունը արձագանքեցին, դատապարտեցին, Հայաստանի ու հայ ժողովրդի կողքին կանգնեցին, անգամ Հունգարիայի որոշ հասարակական կազմակերպություններ եւ նախկին պաշտոնյաներ, սակայն պետությունների արձագանքը մեր սպասելին չեղավ, ուրեմն հատկապես սփյուռքի մեր կառույցներին ու պետական համապատասխան մարմիններին պետք է ուղենիշ տան ոչ այնքան հասարակական կազմակերպությունները, որքան հենց պետական ապարատները:

Դա ապագայում, այսինքն՝ հենց վաղվանից: Իսկ այսօր անհրաժեշտ է ցուցաբերել որոշակի զսպվածություն: Այո, տպավորությունն այնպիսին է, որ Գուրգեն Մարգարյանին հենց նոր են սպանել, այո, թեման առնչվում է մեզ բոլորիս, առաջացել է ժողովրդական զայրույթ, ու հենց այդ պատճառով էլ հարկավոր է զսպվածություն պահել, եթե կուզեք՝ անգամ զգուշություն: Իլհամ Ալիեւն այնքան էլ հիմար չէ, որ Ադրբեջան ժամանելուն պես անմիջապես ներում շնորհի մարդասպանին: Ուրեմն այստեղ մի բան կա, քանի որ Ադրբեջանը որքան էլ հարուստ ու նավթով լի լինի, ոչինչ է առանց միջազգային գործընկերների, հետեւաբար Իլհամ Ալիեւն ուղղակի չի կարող թքած ունենալ միջազգային արձագանքի վրա: Ուրեմն այստեղ հնարավոր է թակարդ: Օրինակ՝ ներում շնորհելով մարդասպանին, Իլհամ Ալիեւը շատ լավ հասկանում է, որ իր այդ որոշումը ոչ թե Սաֆարովի ազատության, այլ մահկանացուի որոշումն է: Հետեւաբար, որքան մենք այսօր հրապարակային խոսենք «Բաքու մեկնելու ու Սաֆարովին վերացնելու» մասին, այնքան Բաքուն, իրադարձությունների որոշ զարգացումներից հետո ավելի ծանրակշիռ հիմքեր կունենա մեղադրելու հայությանն ու ՀՀ-ին՝ «միջազգային հանցագործության», վրեժխնդրության, ահաբեկչության կազմակերպման մեջ: Ու ո՞վ ասաց, որ Իլհամ Ալիեւն այնքան բարի է, որ իր նպատակը Սաֆարովին ներում շնորհելով հենց սա չէ, չէ՞ որ որպես կանոն մեկ անգամ թեկուզ քիլլեր բանեցնողը մեկ այլ քիլլերի կարիք է ունենում՝ առաջինին վերացնելու համար: Եվ կամ մի՞թե հնարավոր չէ, որ «ամենակարող» Ալիեւն անգամ ենթարկվել է ամենասովորական շանտաժի:

Օրինակ՝ թե՛ դատավարության ընթացքում, թե՛ մանավանդ հիմա ակնհայտ է, որ Սաֆարովն իրականում վարձու մարդասպան է, ավելի ճիշտ՝ հենց իր իսկ գործադրած գործիքը՝ կացինը, եւ կատարել է պետական ամենաբարձր մակարդակի պատվեր՝ իր գործողության դիմաց ստանալով ազատություն, համաժողովրդական սեր, բնակարան, 8 տարվա աշխատավարձ միանգամից եւ լեյտենանտից՝ մայորի կոչում: Եվ մի՞թե հնարավոր չէ, որ Սաֆարովը շանտաժի է ենթարկել Ալիեւին, որը այնքան խելամտություն ունեցել է, որպեսզի անմիջապես ազատություն չտա մարդասպանին: Ասենք, Սաֆարովն ուղղակի սպառնացել է՝ կամ դուք արագացնում եք իմ ազատության գործընթացն ու իմ Բաքու ժամանելուն պես ազատություն շնորհում, կամ ես ամբողջ աշխարհին հայտարարում եմ, որ հենց դուք եք ինձ պատվիրել սպանությունը:

Սաֆարովն արդեն իսկ ցմահ դատապարտված լինելով՝ կորցնելու ոչինչ չուներ, իսկ Ադրբեջան-պետությունն ու Իլհամ Ալիեւն անձամբ՝ կորցնելու ավելի շատ բան ունեին, քան Ադրբեջանի պետական նավթային ընկերության տարեկան եկամուտները: Ուրեմն Սաֆարովին ներում շնորհող ալիեւյան հրովարտակը ոչ այլ ինչ է, քան Սաֆարովին վերացնելու հրովարտակ. վաղ թե ուշ Ալիեւն ինքն է դա անելու: Հետեւաբար մենք պետք է հիշենք, որ որքան ցնցող է իրադարձությունը հասարակության համար, որքան մեծ է միջազգային սկանդալը, այնքան դա այն կրող հասարակությունից ու նաեւ պետությունից պահանջում է զգուշավորություն՝ առաջին հերթին հայտարարությունների մեջ: Այս առումով խիստ օրինակելի եւ դիպուկ է արված ՀՀ ՊՆ հայտարարությունը, որում մասնավորապես ասված է. «Հայերը թշնամուն պատժում են մարտի դաշտում»:

Ի դեպ, Բաքվում կրկին երեկ ձերբակալվել է մեկը, որը սպանել է 74-ամյա ծերունու՝ ինչպես ադրբեջանական vesti.az-ն է գրում՝ «արյան վրեժի համար»: Ինչպես ասում են՝ ինչպիսին հերոսներն են, այնպիսին ժողովուրդն է... ափսոս:

ºВº ´аф¸²дºЮоЖЬ Жраш К²´ºИ ºЬ...

# Ռ. Քոչարյանը Հունգարիային առաջարկում է ճանաչել ԼՂՀ-ն

**Այս օրերին, երբ դատապարտող հայտարարություններ են հնչում ադրբեջանցի մարդասպանին արտահանձնելու եւ ներում շնորհելու մասին, եւ Հայաստանի նախագահն անմիջապես հնչեցրեց իր գնահատականները, բնական է, որ հանրությունը սպասում էր նաեւ Հայաստանի նախորդ երկու նախագահների գնահատականներին:**

**Երեկ Ռոբերտ Քոչարյանի գրասենյակն էր հայտարարություն տարածել, որտեղ, ճիշտ է, մեկնաբանություններ չկան Հայաստանի հետագա քայլերի մասին այս նոր իրավիճակում, սակայն բուն իրողության գնահատականը կա, եւ անգամ առաջարկ է արվում Հունգարիային՝ ճանաչելու Արցախի անկախությունը. «Ադրբեջանի իշխանությունների գործողությունները զարմանք չեն առաջացնում: Սա այդ երկրում վաղուց փայփայվող հայատյացության չկշռադատված դրսեւորում է: Հիշենք Սումգայիթը, հայերի ջարդերը Բաքվում եւ «շահիդների պուրակը», որը հավերժացնում է ջարդարարների հիշատակը: Սրանում համոզվածությունն է ժամանակին ձեւավորել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում հայկական կողմի անփոփոխ դիրքորոշումը՝ որեւէ ձեւով Ադրբեջանի կազմում ԼՂՀ գոյության անհնարինությունը:**

**Ադրբեջանում այնպիսի ատելությամբ են լցված հայերի նկատմամբ, որ մոռացել են բարոյականության սահմանների մասին: Մարդասպանին ներում շնորհելու հրամանագիրը ղարաբաղցիների՝ Անկախություն ունենալու բոլոր հիմնավորումների լավագույն ապացույցն է:**

**Ի դեպ, եթե հունգարական կողմի արձագանքից պարզվի, որ Ադրբեջանն իրոք խաբել է պաշտոնական Բուդապեշտին եւ հանցավոր համաձայնություն չի եղել, ապա հունգարացիների ամենաարժանի պատասխանը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչումը», ասված է հայտարարության մեջ:**

**Սակայն սա մի տեսակ թերի հայտարարություն է, քանի որ ով ճանաչում է Ռ. Քոչարյանին, վստահ է՝ նա առավել հանգամանալից վերաբերմունք կարտահայտի դեռ եւ չի շրջանցի Հայաստանի ներկա քայլերի գնահատումը:**

**Ս. Խ.**

# Հունգարական «մարդասիրության» եւ մի օրինակ

**Միացյալ Նահանգներում հիմնված «Սիմոն Վիզենթալի կենտրոնում», որը զբաղվում է Հոլոքոստի ուսումնասիրությամբ, հունգարացի նախկին զինվորական Չարլզ Զենթաին գրանցված է ամենաշատ հետապնդվող այն 10 մարդկանց ցանկում, ո-**



**րոնք 1944 թվին Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում մասնակցել են մարդկանց հետապնդմանը, հալածանքներին ու հրեաների սպանությանը:**

**Ըստ բրիտանական «Գարդիան» թերթի՝ Չարլզ Զենթաին հիմա ապրում է Ավստրալիայում, թեեւ Ավստրալիայի ու Հունգարիայի միջեւ կա էքստրադիցիայի համաձայնագիր, սակայն ավստրալացի դատավորները նշում են, որ այս դեպքում համաձայնագիրը չի կիրառվի:**

**Չարլզ Զենթաին հիմա ապրում է ազատության մեջ, ինչպես ադրբեջանցի ոճրագործ Ռամիլ Սաֆարովը, եւ ազատության մեջ է շնորհիվ հունգարական պետության, որը չխնայեց իր ջանքերը Ռամիլ Սաֆարովին հերոսացնելու համար, սակայն խնայեց նախկին զինվորական Զենթաիին իր երկիրը տեղափոխելու համար:**

**Ավստրալիայում Չարլզ Զենթաին ընդամենը կասկածյալ է, մեղադրվում է հրեա երիտասարդին ծեծելով սպանելու մեջ, հիմա նա վճարված գրավի դիմաց ազատության մեջ է, ու հաշվի առնելով նրա տարիքը, արդեն 90 տարեկան է, կյանքի մնացած տարիները բանտում անցկացնելը նրա համար կլինի մահացու: Սակայն խնդիրը ոչ թե կասկածյալի տարիքն է, այլ փաստը, որ նա Ավստրալիա գաղթել է 1950 թվին, եւ հունգարական արդարադատությունը եթե իսկապես ուզենար պատժել Չարլզ Զենթաիին անցած շուրջ 60 տարիների ընթացքում նա կհայտնվեր հունգարական բանտում:**

**Էքստրադիցիան մերժելու ավստրալական դատարանի որոշումը բխում է ավելի շատ Հունգարիայի շահերից, նույնիսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների օրենսդրությունն աշխատել է հօգուտ Չարլզ Զենթաիի. ավստրալական դատարանը սահմանել է՝ երբ հրեա պատանին մահացել է, պատերազմական ժամանակներում կատարվող հանցանքի մասին հունգարական օրենսդրությունում նշված չի եղել, հետեւաբար Զենթաիի կատարածը չի համարվում հանցագործություն: Ավստրալա-հունգարական այս «մարդասիրությամբ» էլ Զենթաին մնացել է անպատիժ:**

**Ի. Պ.**

# Վիճակագրություն

# Հույժ մտահոգիչ էթնոժողովրդագրական փոփոխություններ Այսրկովկասում

*(XX դ. - XXI դ. սկզբի վիճակագրություն)*

Տարածաշրջանը, որտեղ մենք ապրում ենք, մի ժամանակ կոչում էին Անդրկովկաս, իսկ այժմ՝ Հարավային Կովկաս: Սակայն այդ անուններից առաջինը, որն ընդամենը նշանակում էր «Կովկասից այն կողմ» (ռուսների համար), միակողմանի ու պակասավոր էր եւ ըստ էության աշխարհագրական անուն էլ չէր, այլ ընդամենը՝ կողմնանշում: Իսկ երկրորդը, ըստ տարբեր մասնագետների, ընդհանրապես սխալ է, քանզի այդպիսի ֆիզիկաաշխարհագրական կամ, առավել եւս, պատմաաշխարհագրական տարածք չի եղել ու չկա... Իր աշխարհաքաղաքական ենթատեքստով հայերիս համար սկզբունքորեն կարեւոր այս խնդիրը թողնելով համապատասխան մասնագետներին, առայժմ այստեղ պայմանականորեն գործածենք շատ բան չպարտավորեցնող, խնդրո առարկա տարածքը մեր կողմից տեղանշող Այսրկովկաս հասկացությունը, միայն հեղինակային մեջբերումների դեպքում չշրջանցելով ներկայացվող ուսումնասիրության մեջ գործածվող անվանումը:

Գյումրու Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Արտաշես Բոյաջյանի «Էթնոժողովրդագրական գործընթացները Հարավային Կովկասում XX դ.-XXI դ. սկզբին» ուսումնասիրության մեջ ներկայացված վիճակագրական նյութն ու դրանից բխող հարցադրումները, որոնց վերաբերյալ նա զեկուցմամբ հանդես է եկել անցյալ տարի Երեւանում կայացած տարածաշրջանային մի գիտաժողովում, մեր կարծիքով՝ որոշակի ուշադրություն են պահանջում ոչ միայն գիտական առումով: Աշխատանքում երեւակվող հիմնական խնդիրներին փորձենք նրանում բերված թվերի լեզվով անդրադառնալ հնարավորինս համառոտ:

Ժամանակակից աշխարհում, ինչպես նշում է Ա. Բոյաջյանը, էթնոսների գոյատեւումը, զարգացման ընթացքը եւ որեւէ տարածաշրջանում վարվող ազգային քաղաքականությունը մեծապես պայմանավորված են պետությունների աշխարհաքաղաքական դիրքով, սոցիալ-տնտեսական եւ մշակութային զարգացման մակարդակով: Մեր տարածաշրջանի երկրների էթնոժողովրդագրական գործընթացների բնույթը ուսումնասիրության հեղինակը պայմանավորում է Ռուսաստանի, Թուրքիայի եւ Իրանի քաղաքական ու տնտեսական շահերի կիզակետում գտնվելու հանգամանքով եւ հետեւաբար՝ սրանց հարաբերությունների բնույթով, այդ մեկնակետից անդրադառնալով տարածաշրջանի բնակչության հատկապես էթնիկ կազմի հարաբերակցության փոփոխություններին:

Աշխարհաքաղաքական կարեւոր տարածաշրջաններից մեկը համարվող Այսրկովկասը բնութագրվում է բնակչության էթնիկ կազմի բազմազանությամբ, որում, ինչպես հայտնի է, իրենց քանակով ու տարաբնակեցման բնույթով առանձնանում են երեք տիտղոսավոր ազգեր՝ հայերը, վրացիները եւ ադրբեջանցիները: 1897 թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով Այսրկովկասն ունեցել է մոտ 5 մլն բնակիչ, որից հայերի թիվը 1,1 մլն էր կամ տարածաշրջանի բնակչության ընդհանուր թվի 22 %-ը, քարթվելական ժողովուրդներինը (վրացիներ, իմերեթներ, մեգրելներ, սվաններ եւ այլք)՝ 1,3 մլն կամ 26 %, թյուրքալեզու ժողովուրդներինը՝ 1,5 մլն կամ 30 %: 0,3 մլն կամ 6,0 % կազմել է ռուսների թիվը, նույնքան էլ՝ իրանալեզու բնակչությանը (քրդեր, օսեր, թալիշներ եւ այլ ազգություններ):

Հայերը, վրացիները եւ ադրբեջանցիներն ըստ 1926 թ. Համամիութենական մարդահամարի տվյալների կազմել են տարածաշրջանի ամբողջ բնակչության 84, իսկ 21-րդ դարի սկզբին՝ 88,7 %-ը: 1926-1979 թթ. Այսրկովկասում հայ բնակչության թիվը 1,3 մլն-ից հասել է 3,6 մլն-ի, այսինքն՝ 50 տարվա ընթացքում աճել է ավելի քան 2.7 անգամ, վրացիներինը 1,8 մլն-ից հասել է 3,4 մլն-ի կամ աճել է շուրջ 1,9 անգամ, իսկ ադրբեջանցիներինը 1,7 մլն-ից հասել է 5,1 մլն-ի կամ ավելացել է 3 անգամ: 1926 թ. Հայաստանում ապրել է տարածաշրջանում բնակվող հայերի ընդհանուր թվի 55,8 %-ը, 1979 թ.՝ 74,7 %-ը: Նույն ժամանակամիջոցում Վրաստանում բնակվել է հայերի թվի համապատասխանաբար 23 եւ 12,3 %-ը, իսկ Ադրբեջանում՝ 21,2 եւ 13 %-ը: 2001 թ. այդ ցուցանիշը Հայաստանում կազմել է 82,3, Վրաստանում՝ 5,7 %, իսկ Ադրբեջանում, հայտնի պատճառներով, հայեր չեն մնացել: ԼՂՀ-ում բնակվում է տարածաշրջանի հայերի թվի 4,4 %-ը:

Այսրկովկասի հանրապետությունների անկախացումից հետո Վրաստանում հայերի թիվը գրեթե կրկնակի նվազել է. 1979 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով այստեղ բնակվել է շուրջ 448 հազար հայ, իսկ 2002 թ. Վրաստանի մարդահամարի տվյալներով՝ 248,9 հազար: Վերջին թվի մեջ ներառված չէ Աբխազիայի 44, 9 հազար (2003 թ.) հայությունը, որն այստեղ՝ Աբխազիայում, ըստ բերված վիճակագրական տվյալների, մեծամասնություն է կազմում Գագրայի (ամբողջ բնակչության 44,1 %-ը), Սուխումի (61,4 %-ը) եւ Գուլրիպշի (52,2 %-ը) շրջաններում: Վրաստանի Հանրապետությունում հայերը մեծամասնություն են կազմում Ջավախքում, ներկայացնելով ամբողջ բնակչության 54,6 %-ը, ընդսմին Ախալքալակի շրջանում այդ ցուցանիշը կազմում է 94,3 իսկ Նինոծմինդայի շրջանում՝ 95,8 %: 2002թ. մարդահամարի տվյալով Թբիլիսիում բնակվում էր Վրաստանի հայերի թվի 33 %-ը կամ 82 586 մարդ, այն դեպքում, երբ 1989 թ. նրանց թիվն այստեղ 150 հազարից անցնում էր:

1926-1979 թթ. ընկած ավելի քան 50-ամյա ժամանակաշրջանում, ինչպես վերը ցույց տրվեց, տարածաշրջանում վրացիների թիվն ավելացել է մոտ երկու անգամ, ինչը զիջում է հայերի, ադրբեջանցիների եւ ռուսների թվի աճի ցուցանիշին: Այդ ժամանակամիջոցում հայերի թվի աճի լավ տեմպը հեղինակը բացատրում է բնական վերարտադրությամբ, որում իր կարեւոր դերն է ունեցել 1920-ական թվականներին սկիզբ առած ու մինչեւ 1980-ականների սկիզբը շարունակված հարյուրհազարավոր սփյուռքահայերի հայրենադարձությունը, իսկ ադրբեջանցիների թվի բացարձակ աճը՝ հիմնականում բնական վերարտադրության տեմպով, ինչպես նաեւ ազգային փոքրամասնությունների՝ քրդերի, թաթերի, թալիշների, ուդիների եւ այլոց ձուլմամբ: Բայց ահա 1979 թվականից մինչեւ 21-րդ դարի սկիզբը տարածաշրջանում վրացիների թիվը տարեկան միջինն աճել է 0,4 %-ով, ադրբեջանցիներինը՝ 2,1 %-ով, իսկ հայերինն, ընդհակառակը, նվազել է 0,1 %-ով: Ճիշտ է՝ ադրբեջանցիների թվի նման աճի վերաբերյալ նրանց պետական վիճակագրական տվյալները հետազոտողին կասկածի տեղիք են տալիս:

Բոլոր դեպքերում ադրբեջանական տարրի գերակա աճը խիստ զգալի է: Եթե 1926-ին նրանց թիվը (1,7 մլն) 100 հազարով պակաս էր տարածաշրջանում բնակվող վրացիների եւ 400 հազարով ավելի էր հայերի թվից, ապա 1979-ին նրանք եռակի աճից հետո վրացիների թիվը գերազանցում էին ամբողջ 1,7 մլն-ով, հայերինը՝ 1,5 մլն-ով: 1979-1999 թթ. ընկած ժամանակամիջոցում, ըստ վկայակոչված տվյալների, ադրբեջանցի բնակչության թիվը շարունակելով մեծանալ՝ աճել է ավելի քան 1,5, իսկ 1999-2007 թթ.՝ 1,1անգամ: Իսկ ահա ռուսների, հույների եւ հրեաների թվի զգալի անկում է տեղի ունեցել: 20-րդ դարի վերջին ադրբեջանցիների թվի 11,4 % (29,1 հազար մարդ) աճ է գրանցվել Վրաստանում, որտեղ այսօր նրանք դարձել են վրացիներից հետո երկրորդ մեծաթիվ ազգությունը: Մինչդեռ 1980-ական թվականներին նրանք այստեղ չորրորդն էին՝ զիջելով նաեւ հայերի ու ռուսների թվաքանակին:

Այսպիսով, ըստ ուսումնասիրության մեջ վկայակոչվող պաշտոնական վիճակագրական տվյալների հաշվարկի, 21-րդ դարի սկզբին Այսրկովկասի բնակչության ընդհանուր թվում հայերը կազմել են 22,3 %, վրացիները՝ 24,5 %, իսկ ադրբեջանցիները՝ նախորդ դարասկզբի 30 %-ի փոխարեն արդեն 46,1 %: Փաստորեն, եթե հավատանք Ադրբեջանի 1999 թ. մարդահամարի արդյունքներին, նկատում է ուսումնասիրության հեղինակը, ապա 21-րդ դարի սկզբին տարածաշրջանում յուրաքանչյուր երկու բնակչից մեկն ադրբեջանցի է: Բերված տվյալների համաձայն Այսրկովկասում ադրբեջանցի ազգաբնակչության թիվն ավելի մեծ է, քան հայերի, վրացիների, ռուսների, ուկրաինացիների, հույների, քրդերի թիվը միասին վերցրած: Բնական համեմատաբար արագ աճի շնորհիվ Ադրբեջանն իր առաջատար դիրքը կպահպանի:

Մասնագետի գնահատմամբ, թեեւ Հայաստանը մեկդարյա ժամանակամիջոցում ունեցել է ընդհանուր աճի որոշ դրական ցուցանիշ, սակայն այժմ արտագաղթի եւ արտագնացության չափերի անկայունության պայմաններում միտումները հուսադրող չեն: Բնակչության արտահոսքը, որը յուրաքանչյուր երկրի ժողովրդագրական անվտանգության հիմնական սպառնալիքն է, առաջացնում է ոչ միայն քանակական, այլ նաեւ որակական փոփոխություններ: Վերջին ժամանակներում արտագաղթը մեղմելու Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկվող որոշ միջոցները եւս շոշափելի արդյունքներ չեն տալիս, եւ 2008 թվականից հետո միգրացիայի սալդոյի բացասական ցուցանիշները մեծանում են: Ի դեպ, հարեւան Վրաստանում նույնպես ժողովրդագրական ճգնաժամ է, եւ վրացիների բնական աճի գործակիցը զիջում է հայերի ու ադրբեջանցիների համանման ցուցանիշին:

Էթնոժողովրդագրական գործընթացների միտումները տարածաշրջանում այնպիսին են, ամփոփում է Ա. Բոյաջյանը, որ տարեցտարի ավելանում է ադրբեջանցիների եւ պակասում հայերի ու վրացիների թիվը: Թե նման իրավիճակի շարունակվելը ոչ հեռավոր ապագայում ինչ հետեւանքների կարող է հանգեցնել՝ երեւի դժվար չէ կանխատեսել...

**Պատրաստեց**
**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆԸ**

ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆ

# Մեսրոպ Չինչինեանի յիշատակին

*Այդ ռումբի բեկորը մեր սիրտերն ալ արիւնեց*

Երբ լսեցինք մեր ընկերոջ՝ Մեսրոպ Չինչինեանի ռումբի մը բեկորին պատճառաւ վիրաւորուելուն լուրը, ցնցուեցանք ու ցաւեցանք բոլորս ալ: Երբ լսեցինք, որ իրեն օգնութեան փութացողը տեղացի սովորական արաբ մարդ մը եղած է, որ իր բեռնատար փոքր կառքով զինք հիւանդանոց հասցուցած է, բնաւ չզարմացանք, քանի որ եթէ հակառակը պատահեր, նոյն ձեւով պիտի վարուեր հայն ալ: Այսպես է մեր յարաբերութիւնը տեղացիներուն հետ Հալէպի մէջ: Մէկը ռումբ կը դնէ կեդրոնական փողոցներէն մէկուն աղբարկղին մէջ, միւսը՝ անոր պատճառած վնասը դարմանելու կը փութայ: Այս ալ զարմանալի չէ այլեւս, երբ իրենց սատանայական ծրագիրները ի գործ դնելու համար, խաւարի ասպետները ինչ-ինչ միջոցներով մարդիկ կը զինուորագրեն ու եղբայրը-եղբօր սպաննելու կ՚ուղարկեն:

Մեսրոպը վիրաւորուելէն երկու շաբաթ ետք փակեց իր աչքերը, սուգի մատնելով իր հարազատներն ու ընկերները, մասնաւորաբար Հալէպէն հեռու, Երեւան գտնուողները: Օրը-օրին հետեւեցանք իր առողջական կացութեան, սակայն մահուան փոթը անսպասելի էր, անսպասելի ու անհաւատալի:

Հալէպ, թաղման ներկայ գտնուողներէն մէկը հեռախօսէն հեկեկալով կ՚ըսէր՝ եկեղեցւոյ մէջ բոլոր տղամարդիկը կու լային...

Հապա չլայի՞ն, այսպիսի ոսկի ընկեր մը կորսնցնելով:

51 տարեկան, համալսարանաւարտ, բարեհամբոյր, նուիրեալ միութենական մը, որ փոքր տարիքէն, իր երկուորեակ եղբօր՝ Վարանդին հետ աչքի զարնէին իրենց խելացութեամբ, զարգացումով եւ ճատրակի հմտութեամբ:

Երկար տարիներ մաս կազմած է Հայ երիտ. ընկերակցութեան «Սպենդիարեան» երգչախումբին, եղած է շարք մը յանձնախումբերու գործունեայ անդամ:

Վերջին իր պաշտօնը Հայկական բարեգործական ընդհանուր միութեան Հալէպի տեղական մասնաճիւղի հաշուպահութիւնն էր:

Ափսոս եղաւ Կորսնցուցինք սիրելի ընկեր մը, որուն բացակայութիւնը զգալի պիտի ըլլայ միշտ:

Մեր խորին ցաւակցութիւնները իր հօր, ՀԲԸՄ-ի եւ ՀԵԸ-ի վեթերան անդամ Յակոբ Չինչինեանին, տիկնոջ՝ Լենա Լաթերովեանին, եղբօր՝ Վարանդին ու քրոջ՝ Մարալին, անոնց պարագաներուն եւ բոլոր հարազատներուն ու բարեկամներուն:

Սիրելի Մեսրոպ, յիշատակդ անթառա՛մ պիտի մնայ:

**Վասն ՀԲԸՄ-ի**
**Հալէպի մասնաժողովի**
**Յ.ՄԻՔԱՅԷԼԵԱՆ**
**Երեւան**

# Հերքում

**Յարգարժան խմբագրութիւն «Իրավունք» շաբաթաթերթի**

Ձեր թերթի 24-27 օգոստոսի համարի 12-րդ էջին վրայ, «Սիրիահայերը Հայաստանում» ընդհանուր խորագրի տակ, ձեր թղթակից Լիոնա Ազարյանի հարցազրոյցին մէջ ինծի վերագրուած կարգ մը պատասխաններ կան, որոնք ճիշդ չեն. ես այդպիսի պատասխաններ չեմ տուած, ինչպէս՝ «մինչեւ օրս շարունակվում է անխնա կոտորածը» կամ՝ «ծերերը վախից տեղնուտեղը հանկարծամահ են լինում»:

Ա՛յլ տեղ մը, իբր թէ ըսած ըլլամ՝ «(Երեւանը) իհարկե շատ է գեղեցկացել, տեսարժան վայրերով հարստացել, բայց ժողովուրդը մեր պատկերացրած հայերից շատ են տարբերվում: Մի տեսակ գոռոզ, ինքնահավան են դարձել: Դրսից եկածին օտարի աչքով են նայում: Դա է տարբերությունը, որ շատ ցավալի է մեր՝ սփյուռքահայության համար»:

Եվ վերջապէս՝

«Շատ կուզենայի մնալ Հայաստանում, բայց Հայաստանը եւ հայ ժողովուրդը պայմաններ չեն ստեղծում մնալու, ամրապնդվելու համար: Սիրիայում ունենք կայուն աշխատանք, ընկերություն, իսկ այստեղ, ամենապրիմիտիվ աշխատանքի համար երբ դիմում ես, առաջինը հետեւյալ հարցն են տալիս. Ո՞վ է ուղարկել: Երբ ասում ենք՝ ինքներս ենք դիմել, ասում են՝ գիտեք ինչ, ցավում ենք, բայց ազատ աշխատատեղ չունենք: Այսինքն ստացվում է, որ մեկը ուղարկած լիներ, գուցեեւ լիներ աշխատատեղ: Անձնագրերի, վարորդական իրավունքների հետ կապված խնդիրները ասում են, ամսվա ընթացքում կլուծենք: Եկածները մտածում են, որ եթե ուրիշ տեղ գնային, գուցե ավելի լավ լիներ: Կամ եթե նման կերպ էլ լիներ, գոնե կմտածենք, որ օտար երկրում ենք:»

Վերոյիշեալ մէջբերումները բացարձակապէս իմս չեն, եւ կը հերքեմ այդ ըսուածները: Երեւի ձեր թղթակիցը շփոթած է եւ այլ մարդոց տուած պատասխանները վերագրած է ինծի:

Որպէս լուսաբանութիւն տրուած այս գրութիւնը, լրագրական օրէնքի եւ պարկեշտութեան հիմունքով, կը խնդրեմ որ հրապարակէք շուտափոյթ կերպով, միեւնոյն էջաթիւի, միեւնոյն տեղը:

Յուսալով, որ ձեր թղթակիցը կանդրադառնայ իր սխալին, ձեզի կը յայտնեմ իմ շնորհակալութիւնները:

**ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ**
**ՀԲԸՄ Հալէպի մասնաճիւղի**
**ատենապետ**

*«Ազգ»-ի կողմից. - Նամակ-հերքումը ավելի քան մեկ շաբաթ առաջ ուղարկվել եւ չի տպագրվել «Իրավունք» թերթում:*

# Հետաքրքրաշարժ փաստեր ԱՄՆ ընտրություններից

*Ներկայացվող տեղեկատվությունը վերցվել է ԱՄՆ-ում 1868 թ.-ից տպագրվող «Համաշխարհային փաստեր. 2012» տեղեկատուից*

Երկիր մոլորակի հյուսիսից հարավ թե արեւելքից արեւմուտք բնակվող մարդիկ, ընդունեն թե ոչ ԱՄՆ-ի հերթական իշխանության պահվածքը, 4 տարին մեկ որոշակի հետաքրքրությամբ հետեւում են այս երկրում ծավալվող նախընտրական իրադարձություններին եւ անհամբերությամբ են սպասում հերթական ընտրություններին: Միլիարդավոր մարդկանց է հետաքրքրում, թե ով կդառնա գերհզոր այս երկրի ղեկավարը, որն իր միանձնյա որոշումներով կարող է ազդել թույլ թե հզոր ինքնիշխան պետությունների վրա, պատերազմել ու արդարացնել իր գործողությունները, դրանք հայտարարել ԱՄՆ-ի հետաքրքրությունների շրջան: Դեմոկրատ լինի նա թե հանրապետական, սպիտակ թե այլ մաշկ ունեցող, այս երկրի թիվ 1 պաշտոնյան իրեն համարում է վճիռներ ընդունող եւ իրագործող, անգամ եթե դրանք 100-միլիարդավոր դոլարների ծախսեր են պահանջում, որի կարիքն ունեն Երկիր մոլորակի 100-ից ավելի երկրների հարյուրմիլիոնավոր բնակիչներ: Մոտավորապես այսպիսին է շուրջ 225 տարի առաջ ստեղծված այս պետությունը, ուր առաջին անգամ ընտրություններ անց են կացվել 1789 թվականին. ԱՄՆ-ի նախագահ է ընտրվել անկախության գաղափարի ջատագով Ջորջ Վաշինգտոնը, որը կուսակցությունների առկայության պայմաններում գերադասեց ներկայանալ որպես ֆեդերալիստ, համերկրային թեկնածու: Նրա օրոք փոխնախագահ Ջոն Ադամսը 4 տարի անց երկրորդ նախագահ ընտրվեց եւ պաշտոնավարեց նույնպես այս կարգավիճակում: Իսկ ահա 3-ից 6-րդ նախագահները նախընտրեցին դեմոկրատների ու հանրապետականների միացյալ թեկնածուի կարգավիճակը: Երկիրը նոր-նոր էր կայանում, եւ նորաստեղծ պետությունում ավելորդ կրքեր չբորբոքելու նպատակով ընտրեցին այս ուղին: Ինչ-որ առումով խորհրդանշական 7-րդ նախագահից սկսած մինչեւ օրս ԱՄՆ-ում երկրի նախագահի ընտրության պայքարն ընթանում է հիմնականում 2 հայտնի կուսակցությունների թեկնածուների միջեւ: Անկուսակցական 5 նախագահներից զատ հանրապետականները հաղթել են 18 անգամ, դեմոկրատները՝ 15, ներառյալ Բարաք Օբաման, որը հանրապետական Մակքեյնի նկատմամբ տպավորիչ հաղթանակ տարավ, անշուշտ հյուսիսամերիկյան ընտրական համակարգի չափանիշներով, որը թերեւս միակն է աշխարհի 200-ից ավելի երկրների պարագայում: Այն առանձնահատուկ է այն առումով, որ երկրի ղեկավարին ընտրում են ոչ թե ԱՄՆ-ի քաղաքացիները, այլ նրանց կողմից ընտրված նահանգային ընտրիչները: Օրինակ՝ 37 մլն բնակչություն ունեցող Կալիֆոռնիային բաժին է հասնում 55 ընտրիչ, 25-միլիոնանոց Տեխասին 34 ընտրիչ: Եթե անգամ նահանգային ձայներն ստացվեն 50-50 տոկոս, բավական է 1 ձայնի առավելությունը, որպեսզի Կալիֆոռնիայի 55 ընտրիչները համարվեն այդ 1 ձայնը ավել ունեցող հանրապետականների կամ դեմոկրատների ներկայացուցիչները: 11 խոշոր նահանգներում հաղթելու դեպքում, որոնց ներկայիս բնակչությունը կազմում է 180 մլն մարդ, մնացյալ 40 նահանգների արդյունքները որեւէ բան փոխել չեն կարող, քանզի այդ 11 խոշորների ընտրիչների քանակը ստացվում է 277, հաղթանակի համար պահանջվող 270-ի դիմաց: Ասենք, 2008-ի ընտրություններում Մակքեյնին արդեն հիշատակված Կալիֆոռնիայում ստացավ 5 մլն քվե, Օբաման՝ 8 մլն քվե, եւ բոլոր 55 ընտրիչները անվերապահորեն դարձան օբամայական: Անսովոր է, եթե արտառոց չասենք, սակայն այսպիսին է գերհզոր այս երկրի ընտրական համակարգը:



Ավելին, երկրի ընտրական պատմության մեջ արձանագրվել է դեպք, երբ ձայների մեծամասնություն ունեցել է մեկ թեկնածու, սակայն հաղթել է մյուսը: Այդպես պատահեց 2000 թվականի ընտրություններում, երբ 51 մլն ձայն ստացած Ալբերտ Գորն ունեցավ 266 ընտրիչ, իսկ 50.5 մլն ձայների արժանացած Ջորջ կրտսեր Բուշը՝ 270 ընտրիչ, եւ ընտրվեց երկրի նախագահ: Վերջին ընտրություններում, կապված ԱՄՆ-ի բնակչության աճի եւ առանձին նահանգների համամասնության վիճակի հետ, ընտրիչներն արդեն 538-ն էին: 70 մլն եւ 60 մլն ձայներ ստացած Օբաման եւ Մակքեյնին ունեցան համապատասխանաբար 365 եւ 173 ընտրիչներ. ձայների տարբերությունը հազիվ 15 տոկոս է, ընտրիչներինը՝ 200 տոկոսից ավելի: Սակայն արդարության դեմ լիովին չմեղանչելու առումով նկատենք, որ Օբաման նախորդ ընտրություններում պարտություն կրած իր կուսակցի համեմատ ամբողջ 10 մլն ձայն ավելի հավաքեց:

Ուշագրավ մի այլ փաստ: Դեմոկրատ նախագահներին, անգամ 2 ընտրաշրջան հաղթած, չի հաջողվել իշխանությունը իր կուսակցին փոխանցել, այն դեպքում, երբ հանրապետականներին դա մեկ անգամ հաջողվել է: Սակայն նորընտիր այդ հանրապետական Հերբերտ Հուվերին էլ չի հաջողվել 2-րդ անգամ ընտրվել, որը ցույց է տալիս հյուսիսամերիկյան ընտրողների յուրօրինակ վերաբերմունքն իրենց ընտրյալի հանդեպ:

Թերեւս միակ դեպքը, երբ ԱՄՆ-ում համաձայնություն է ձեռք բերվել գործող նախագահին 3-րդ անգամ առաջադրելու առումով, կապված է 2-րդ աշխարհամարտի հետ: 1933-41 թթ. նախագահած Ֆրանկլին Ռուզվելտին ամերիկացիները 1941-ին դարձյալ առաջադրեցին եւ ընտրեցին, որն իր մահկանացուն կնքեց պատերազմի ավարտից շաբաթներ առաջ:

Կարելի է միանշանակ պնդել, որ մաշկի գույնը լինի թե կրոնական պատկանելությունը, ունեցած անշարժ գույքը թե 9 եւ ավելի նիշերից բաղկացած բանկային հաշիվը, հիմնական դեր չեն խաղում գերհզոր այս երկրի թիվ 1 պաշտոնյայի ընտրության հարցում: Ընդամենը հարկավոր է ԱՄՆ-ի բնակիչներին համոզել, որ առաջիկա 4 տարիներին իրենք ավելի լավ ու ապահով են ապրելու, երկիրն էլ հզորագույն պետություն է մնալու: Դա կհաջողվի՞ արդյոք Միթ Ռոմնիին, որի կարողությունը 190-250 մլն դոլար է գնահատվում, թե՞ նրա կողքին աղքատի կարգավիճակ ունեցող 2-7 մլն կարողության տեր Բարաք Օբամային, պարզ կդառնա այս տարվա նոյեմբերի 4-ին: Ինչ դեր կխաղան ընտրապայքարի մյուս մասնակիցները, որոնց մասին գրեթե չի խոսվում. շուրջ 20 այլ թեկնածուները 2008-ի ընտրություններում մոտ 2 մլն ձայն ստացան, իսկ ահա 1996-ի անկախ թեկնածու Պերոտը՝ 8 մլն, մյուսները միասին 10 մլն ձայն: Հայ հանրությանն անհայտ կանաչների ներկայացուցիչ Ռալֆ Նադարը 1996-ին 2,8 մլն ձայն ուներ:

ԱՄՆ-ում նախագահի պաշտոնի ընտրապայքարը նրա տարեկան 400 հազար դոլար աշխատավարձի համար չէ թերեւս, այլ շատ ավելի գայթակղիչ կարգավիճակի, դրա շարունակականության բազմաթիվ գրավչություններով հանդերձ. այս երկրում նախագահը նախկին չի համարվում: Այնպես որ համբերության տրվենք եւ սպասենք:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

---

ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

# Մոսկվան սիրիացի ապստամբներին համեմատեց «Ալ Ղաիդայի» հետ

*Միջազգային Կարմիր խաչի ղեկավարը Դամասկոսում*



**Ռուսաստանի արտգործնախարարությունը խոր տագնապ է արտահայտել այն կապակցությամբ, որ ապստամբական «Սիրիական ազատ բանակը» պատրաստվում է քաղաքացիական օդանավեր խփել Դամասկոսի եւ Հալեպի օդանավակայաններում: Պաշտոնական մեկնաբանությունը զետեղված է ԱԳՆ-ի կայքէջում:**

**ԱԳՆ-ում ընդգծել են, որ ապստամբների այդօրինակ սպառնալիքները «բացարձակապես անընդունելի են» եւ միջազգային իրավունքի «կոպտագույն խախտում են»: «Բարոյական եւ իրավական տեսակետներից սա նշանակում է ընդդիմադիրների կրիտիկական մերձեցում այն «կարմիր գծին», որից այն կողմ «Ալ Ղաիդայի» հանցագործություններից ոչնչով չտարբերվող գործողություններ են», նշվում է հաղորդագրության մեջ:**

**«Սիրիական ազատ բանակի» հայտարարությունը, ընդգծել են ԱԳՆ-ում, «փաստորեն հաստատում է, որ ահաբեկչությունը շարունակում է դրա գործունեության գլխավոր մեթոդներից մեկը մնալ»: Նշվում է, որ սպառնալիքների իրականացման դեպքում ապստամբների «օտարերկրացի հովանավորները» նույնպես լիակատար պատասխանատվություն կկրեն:**

**ՌԴ ԱԳՆ-ն ռուսաստանցիներին կոչ է արել նման պայմաններում չմեկնել Սիրիա, իսկ ապստամբների վրա ազդեցություն ունեցող երկրներին հորդորել է ներգործել նրանց դիրքորոշման վրա:**

**Սիրիացի ապստամբները սեպտեմբերի 1-ից սկսած Դամասկոսի իշխանություններին 72 ժամ էին տվել ռազմօդանավերի թռիչքները դադարեցնելու համար, սպառնալով հակառակ դեպքում թիրախ դարձնել քաղաքացիական օդանավերը: Ապստամբները պնդում են, թե Բաշար Ասադի կառավարությունը դրանք օգտագործում է ապօրինաբար զենք տեղափոխելու համար:**

**Բուն Սիրիայում մարտերը շարունակվում են: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ միջազգային Կարմիր խաչի նոր ղեկավար Պետեր Մաուերը երեկ Դամասկոսում հանդիպել է նախագահ Բաշար Ասադի, արտգործնախարար Վալիդ Մուալլեմի, ներքգործնախարար Մոհամմադ ալ Շաարի եւ առողջապահության նախարար Ասադ Աբդեսսալամ Նայեֆի հետ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Սիրիայում Կարմիր խաչի աշխատանքը դյուրացնելու վերաբերյալ: Պատերազմից տուժած հարյուրհազարավոր մարդիկ դեռ չեն կարողանում օգնություն ստանալ: Կարմիր խաչի տվյալներով, Սիրիայում տեղահանված անձանց թիվը հասնում է 1,2 միլիոնի: Նրանք բնակվում են ժամանակավոր կացարաններում: Մոտ 221 հազար մարդ ապաստանել է հարեւան երկրներում: «Լիբերասիոն» թերթը մեջբերում է ՄԱԿ-ի որոշ տվյալներ, որոնց համաձայն սիրիական հակամարտությունից տուժած անձանց թիվը 2,5 միլիոն է: Միայն օգոստոսին երկրում սպանվել է ավելի քան 5 հազար մարդ, իսկ 100 հազար ուրիշներ լքել են երկիրը:**

Պ. Ք.

---

# Եգիպտոսի միլիարդանոց պարտքը չեղյալ կհայտարարվի

**Բարաք Օբամայի վարչակազմը պատրաստ է գործով ամրապնդել Եգիպտոսի ժողովրդավարացմանն օժանդակելու վերաբերյալ ավելի վաղ արած հայտարարությունները: «Նյու Յորք թայմս» թերթը գրում է, որ խոր ճգնաժամ ապրող Եգիպտոսի տնտեսության աշխուժացման նպատակով Վաշինգտոնը չեղյալ կհայտարարի Կահիրեի 1 մլրդ դոլարի պարտքը:**

**Դեռ 16 ամիս առաջ ԱՄՆ-ը Եգիպտոսին տնտեսական օգնություն ցույց տալու պատրաստակամություն էր հայտնել: Սակայն Օբամայի վարչակազմը սպասում էր երկրի իրադրության կայունացմանը: Հիմա Վաշինգտոնում եզրակացրել են, որ նախագահ Մոհամմեդ Մուրսին կարողացել է ամրապնդել իշխանությունը:**

**Պարտքի դուրսգրումից բացի, ԱՄՆ-ը հավանություն է տվել ԱՄՀ-ից 4,8 մլրդ դոլար վարկ խնդրելու Եգիպտոսի որոշմանը: Օբամայի վարչակազմը 375 մլն դոլարի երաշխիքներ կտրամադրի ամերիկացի այն ֆինանսիստներին, որոնք պատրաստ են ներդրումներ կատարել Եգիպտոսի տնտեսության մեջ: Եվս 60 մլն կհատկացվի Եգիպտոսի գործարարության զարգացման հիմնադրամին:**

**Թերթի կարծիքով, ԱՄՆ-ին ակտիվ գործողությունների է դրդում Եգիպտոսի իրադարձությունների վրա ազդեցությունը կորցնելու վախը: «Նյու Յորք թայմսը» հիշեցնում է, որ Մուրսին առաջին միջազգային այցը կատարեց ոչ թե Վաշինգտոն, այլ՝ Պեկին: Չինաստանը մեծ հետաքրքրություն է հանդես բերում մերձավորարեւելյան շուկաների նկատմամբ:**

**ԱՄՆ-ի տնտեսական օգնության նպատակն է արաբական աշխարհի ամենաազդեցիկ երկրի նոր իշխանություններին ցույց տալ, որ նրանք կարող են հույս դնել իրենց վաղեմի դաշնակցի վրա: Մուրսին եւ Օբաման համակարծիք են, որ մերձավորարեւելյան երկրները առաջին հերթին պետք է հաղթահարեն ներքին խնդիրները, մասնավորապես գործազրկությունը եւ աղքատությունը:**

# Ճշմարտության պահը թելադրում է

## Հայաստանի ստեղծագործական միությունների հայտարարությունը

Վերջին մի քանի օրերի աննախադեպ իրադարձությունները՝ ոճրագործ Ռ. Սաֆարովի փաստացի արդարացումն ու խրախուսանքը պաշտոնական Ադրբեջանի կողմից, որ տեղի ունեցավ հունգարական իշխանությունների ակնհայտ մեղսակցությամբ, մոտեցրել են մեզ մի սահմանագծի, որը կարելի է անվանել ճշմարտության պահ:

Նախ եւ առաջ այդ պահը բնութագրում է Ադրբեջանին՝ 1988-ի սումգայիթյան եղեռնագործությունից մինչեւ այսօր, որպես մի պետության, որի քաղաքակրթական նկարագիրը... կացինն է: Ողջամիտ երկխոսության եւ փոխզիջումների ճանապարհով ղարաբաղյան հարցի կարգավորմանը հասնելու, այդ ուղղությամբ ՀՀ իշխանությունների եւ այլ երկրների գործադրած ջանքերը գալիս-բախվում են այդ կացնային փակուղուն:

Հաջորդը, որ դարձյալ վերաբերում է ճշմարտության պահին, միջազգային քաղաքական հանրության՝ մինչ այժմ որդեգրած «հավասարակշիռ դիրքորոշումն» է, որի սկզբունքային փոփոխությու՛նը միայն կարող է դուրս բերել մեր տարածաշրջանը փակուղուց:

Այդպիսի փոփոխության անհրաժեշտությունը հասունացել է: Արցախի ինքնորոշման իրավունքը՝ առանց սահմանափակող ձեւակերպումների, պետք է ճանաչվի ու երաշխավորվի այդ հանրության անդամների կողմից: Երկակի ստանդարտների քաղաքականությունը ոչ միայն նորանոր հանցագործությունների ու սադրանքների է մղելու Ադրբեջանին, այլեւ շարունակելու է հիասթափեցնել մեր ժողովրդին՝ անվստահության սերմեր ցանելով միջազգային կառույցների եւ գործընկեր պետությունների հետ նրա հարաբերություններում:

Մինչդեռ նույնիսկ փակ աչքերով պարզ մարդկանց համար տեսանելի է, որ Արցախի ժողովուրդը չի կարող «ինքնավարվել» հայասպանությունը քաջալերող պետության կազմում: Ժամանակն է մինչեւ վերջ ձերբազատվելու ստալինյան ծանր ժառանգությունից, ընդունելով իր ազատությունն ու ժողովրդավարական ճանապարհը կառուցող ԼՂՀ-ի սուվերեն գոյությունը՝ արմատական վերափոխությունների ենթարկված մեր աշխարհում:

Այսպիսի արդարացի դիրքորոշման համատեքստում մենք գնահատանքի խոսք ենք հղում բոլոր այն երկրներին, գործիչներին ու մտավորականներին, ում քաղաքական եւ մարդկային խիղճը առանց հապաղումների արձագանքեց օրերս տեղի ունեցած աններելի իրադարձություններին:

Հայաստանի ստեղծագործական միությունները, վճռական եւ պատասխանատու քայլեր պահանջող այս իրավիճակում զորակցելով ՀՀ նախագահի գործողություններին, ակնկալում են, որ Հայաստանի իշխանությունները հետամուտ կլինեն ԼՂՀ անկախության ճանաչմանը:

Այս հանգրվանում մեր ժողովրդին անհրաժեշտ համախմբվածության հրամայականը նկատի ունենալով՝ հույս ենք հայտնում, որ ազգային-հասարակական կյանքը ձեւավորող բոլոր ուժերը կկարողանան վեր կանգնել ներքաղաքական տարաձայնություններից՝ ի նպաստ մեր կենսական շահերի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

**ԼՈՒՐԵՐ**

# Արդա Էքմեքչին ներկայացնում է իր «Դեպի Գողգոթա» գիրքը

Ավելի քան 7000 մղոն կտրելով, Բեյրութի Հայկազյան համալսարանի արվեստի եւ գիտության բաժնի դեկան, դոկտ. Արդա Արսենյան-Էքմեքչին Գլենդեյլի (Կալիֆոռնիա) կենտրոնական գրադարանի դահլիճում հուլիսի 25-ին ներկայացրել է անգլերեն հրատարակությունը իր «Դեպի Գողգոթա» գրքի, որը պատմում է Եղեռնից մազապուրծ իր պապի՝ Հակոբ Արսենյանի ոդիսականը:

Վերջինս Կոստանդնուպոլսի արվարձաններում է մեծացել մինչեւ ընտանիքի տարագրվելը դեպի Հալեպ (Սիրիա): Այնուհետեւ՝ 1919-ից 1940 թթ. ընտանիքը ապրել է Պաղեստինում:

Գիրքը անգլերեն է թարգմանել Արտաշես Քացախյանը:

Դոկտ. Էքմեքչին պատմության եւ հնագիտության մագիստրոսի աստիճան է ստացել Բեյրութի Ամերիկյան համալսարանից, իսկ դոկտորական աստիճան՝ Փարիզի համալսարանից:

Այս մասին Ֆիլիս Համոն տեղեկացնում է «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթում:

Հ. Ծ.

# «Հայերը եւ գիրքը» գիտաժողով ԱԼՄԱ-ում

Հարվարդ համալսարանի Մաշտոցի անվան հայկական ուսումնասիրությունների ամբիոնի, Ամերիկայի հայկական գրադարան-թանգարանի (ALMA), Հայկական մշակութային հիմնադրամի (ACF) եւ Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի (NAASR) նախաձեռնությամբ շաբաթ օրը՝ սեպտեմբերի 15-ին, ALMA-ի ժամանակակից արվեստի պատկերասրահում տեղի է ունենալու գիտաժողով՝ նվիրված «Հայերը եւ գիրքը» թեմային:

Գիտաժողովում ելույթներ են ունենալու, ըստ «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի, պրոֆ. Սեպուհ Ասլանյանը (Կալիֆոռնիա համալսարան, Լոս Անջելես), Մարկ Մամիկոնյանը (ՆԱԱՍՐ), պրոֆ. Քրիստինա Մարանչին (Թաֆթս համալսարան), դոկտ. Բարբարա Մերգերյանը (Հայ կանանց միջազգային ասոցիացիա), պրոֆ. Սիմոն Փայասլյանը (Բոստոն համալսարան) եւ պրոֆ. Ջեյմս Ռասելը (Հարվարդ համալսարան):

Գիտաժողովը մաս է կազմում Ջ. Ռասելի եւ վերոնշյալ համալսարանների ու կազմակերպությունների հովանավորությամբ եւ կազմակերպությամբ արդեն իսկ գործող «Հայերը եւ գիրքը» ցուցահանդեսին, որտեղ ներկայացված է հայ տպագրության եզակի մի հավաքածո:

Հ. Ծ.



# Մախսանսը եւ Ջանեք Սպիցերը կնկարահանվեն Ռուբեն Քոչարի ֆիլմում

Հայաստանի կինոկենտրոնի, RK films, Global film production-ի հետ համատեղ նկարահանվում է «Անունս Վիոլա է» հոգեբանական միստիկ դրաման:

Սկսվել են նկարահանումները, սակայն ֆիլմը հանդիսատեսի դատին կհանձնվի 2013թ՝ Երեւանում եւ Լոս Անջելեսում: Ֆիլմի բեմադրող ռեժիսորն է Ռուբեն Քոչարը, օպերատոր՝ Գեւորգ Գրիգորյան, կոմպոզիտոր՝ Էմմա Զարոբյան, նկարիչ-դիմահարդար՝ Արմեն Այվազյան, պրոդյուսեր՝ Նարինե Քոչար: Գլխավոր դերակատարներ՝ Մաքսանս Քուզուբաշյան, Ջանեք Սպիցեր, Լուսինե Ալեքսանյան, Զարուհի Հակոբյան: Ֆիլմում ներկայացված է երիտասարդ աղջկա հոգեվիճակ՝ ազատության ձգտման եւ աշխարհընկալման ճանապարհին: Սիրո եւ ընկերության հասկացողությունը փոշիանում է շրջապատի եւ հասարակության նսեմացուցիչ վերաբերմունքից: Երիտասարդ աղջիկն իր փրկությունը տեսնում է միայնության, ինքնամփոփության մեջ, մինչ այն պահը, երբ հանդիպում է Աննային: Նա փորձում է ապրել իր նոր ընկերուհու կյանքով, կարծելով, որ դա կլինի իր փրկությունը շրջապատից, որտեղ կորցրել էր իր «ես»-ը: Մտնելով ընկերուհու կյանքը, պարզվում է, որ ընկերուհին եւս ունի շրջապատում եւ ընտանիքում անհանդուրժողականության խնդիր եւ որ իր վիճակն ավելի հանդուրժելի էր, քան նոր ձեռք բերած կյանքում: Հարցի լուծումն է՝ անէանալ, ձուլվել բնությանը՝ միակ մարդկայինին:



Գլխավոր դերակատարները, որոնցից մեկը ԱՄՆ-ից է, մյուսը՝ Ֆրանսիայից, ազգությամբ հայեր են: Դերասանուհի Ջանեք Սպիցերը (ԱՄՆ) արդեն հասցրել է նկարահանվել մի շարք կարճամետրաժ ֆիլմերում, Էրիկ Ռոբերտսի ու Մայքլ Մադսենի հետ «The Trophy» ֆիլմում, «Ghost girls» հեռուստատեսային պիլոտում՝ որպես գլխավոր դերակատար, «Virginity» ֆիլմում մարմնավորել է երիտասարդ աղջկա, որին ստիպել են վաճառել իր անմեղությունը: Ջանեքն իրեն երջանիկ է համարում, որ նկարահանվում է «Անունս Վիոլա է» հայկական ֆիլմում, քանզի ունի հայկական արմատներ եւ իր համար մեծ պատիվ է նկարահանվելու հայկական ֆիլմում, հայոց հողի վրա, եւ իհարկե տաղանդավոր հայ կինոռեժիսորի մոտ. «Երբ կարդացի սցենարը, ցնցվեցի գլխավոր հերոսով, քանի որ յուրաքանչյուր կին իր կյանքի ընթացքում առնչվում է նման իրավիճակի հետ, եւ կարծում եմ յուրաքանչյուր դերասանուհու համար մեծ պատիվ է խաղալ նման կերպար: Ես նաեւ զարմացած էի սցենարի խորության վրա, թե ինչպես է նա կարողացել այդքան լավ արտահայտել կանացի զգացմունքները»:

Իսկ մյուս դերասանը՝ Մաքսանս Կուզբաշյանը Եղեռնից մազապուրծ հայի թոռ է: Դերասանը շատ զգացված է, որ իրեն հայկական ֆիլմում նկարահանվելու հնարավորություն ընձեռվեց: Մաքսանսն իր ուրախությունը հայտնեց Երեւան գալու կապակցությամբ, քանի որ երբեւէ չէր եղել Հայաստանում:

Ռուբեն Քոչարը ներկայացնելով ֆիլմն ասաց. «Ֆիլմն առաջին հայացքից մեր ժողովրդի մասին է, սակայն հետագայում արծարծվում են այնպիսի թեմաներ, որոնք համամարդկային են: Ես փորձել եմ պատմել երկու ընկերուհիների պատմություն՝ ներկայացնելով նրանց ապրումները, հոգեվիճակը: Չնայած գործողությունները կատարվում են Հայաստանում, սակայն այդ ամենը կարող է կատարվել յուրաքանչյուր երկրում: Ֆիլմում ամենակարեւորը աղջիկների հոգեբանական հարաբերություններն են», եւ հավելեց. «Յուրաքանչյուր մարդ իր քաղաքում անհարմարավետություն է զգում, միշտ մեզ թվում է, թե դրսում ավելի լավ է, եւ միայն շփվելուց հետո ենք հասկանում, որ ամենալավը մեր տունն է: Ֆիլմի հիմքում ընկած է այդ հարցը՝ երբեք մի նայիր դուրս, եւ մի փորձիր գեղեցիկը գտնել դրսում, այլ գտիր քո մեջ, քանի որ այն քո մեջ է լինում»:

Անդրադառնալով դերասանների ընտրությանը, Ռուբեն Քոչարն ընդգծեց. «Մենք պետք է շփվենք ամբողջ աշխարհի հետ, գտնենք մեր հայրենակիցներին, որոնք ապրում են դրսում եւ ունեն որոշակի հաջողություններ: Հայաստանում դերասանական դպրոցը սխալ ուղի է մտել եւ այդ ուղին նրանց տանում է կործանման, որն իմ խորին համոզմունքն է: Երկար ժամանակ է ֆիլմի համար դերասանների փնտրտուքով էի զբաղված, եւ այդժամ հասկացա, որ այսօր մեզ մոտ դերասանական դպրոց գոյություն չունի: Մեծ դժվարության առջեւ կանգնեցի դերասանական կազմ գտնելու ճանապարհին, նամանավանդ՝ կանանց հարցում, բայց հետո պարզվեց, որ տղամարդ դերասաններ գտնելն ավելի դժվար է: Այսօր սերիալները ստիպողաբար դառնալով մեր կյանքի մի մասը, նոր դպրոց են բերում, եւ ինձ համար անակնկալ էր, որ այսպիսի շրջադարձ կլիներ թատերական արվեստում, քանի որ մեծամասամբ «դերասանները» իրական կյանքը եւ բեմը չեն կարողանում տարբերել»:

Ռեժիսորը կիսվելով մեզ հետ իր կարծիքով, ասաց, որ իր ֆիլմը բավականին լուրջ է, եւ չի կարծում, որ կգտնվի որեւէ ռեժիսոր, որը կհերքի այն:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# ՀԹԳՄ նախագահ Հակոբ Ղազանչյանի բեմադրությունը Բիշքեկում

Բիշքեկի Չ. Այթմատովայի անվան պետական ազգային ռուսական դրամայի թատրոնի այս խաղաշրջանը կմեկնարկի Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ, Երեւանի Պատանի հանդիսատեսի թատրոնի գեղարվեստական ղեկավար Հակոբ Ղազանչյանի կողմից բեմադրված Վիլյամ Շեքսպիրի «Լիր արքա» ողբերգությամբ, որի պրեմիերան տեղի կունենա սեպտեմբերի 8-ին: Բիշքեկից **«Ազգի»** հետ զրույցում ՀԹԳՄ նախագահ Հ. Ղազանչյանն ասաց, որ ներկայացման վրա աշխատել են միջազգային խմբեր՝ Ռուսաստանից, Հայաստանից եւ Ղրղզստանից, եւ այս նախագիծը կյանքի կոչվեց մշակույթի նախարարության եւ Ղրղզստանի թատերական գործիչների միության համագործակցության շնորհիվ:

Ներկայացման գլխավոր դերակատարն է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, դերասան Վիգեն Ստեփանյանը, նկարչական ձեւավորումն իրականացրել է Անտոն Քեշիշյանը, իսկ խորեոգրաֆիան՝ Ելենա Բոգդանովիչը:

Մ. Հ.

## Մարզական

# Չինական պատն անհաղթահարելի էր



Շախմատի համաշխարհային օլիմպիադան թեւակոխել է վճռորոշ փուլ, որտեղ յուրաքանչյուր սայթաքում կարող է ճակատագրական լինել: Ցավոք, 7-րդ տուրում չինացիների հետ մրցավեճում Հայաստանի տղամարդկանց հավաքականն անհաջողության մատնվեց՝ 1,5-2,5 հաշվով կրելով առաջին պարտությունը: Մրցակցության ելքը վճռվեց 2-րդ խաղատախտակի վրա կայացած պարտիայում, որում Սերգեյ Մովսիսյանը պարտվեց Վան Յուեին: Վան Հաո-Լեւոն Արոնյան, Դինգ Լիրեն-Վլադիմիր Հակոբյան, Գաբրիել Սարգսյան-Բու Քսյանջի պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

Մովսիսյանը մրցաշարում 2-րդ պարտությունը կրեց: Նա թիմում առայժմ ամենացածր արդյունքն ունի՝ 6 հնարավորից վաստակելով 2,5 միավոր: Իսկ լավագույն արդյունքն ունի Գաբրիել Սարգսյանը՝ 5 միավոր 7 հնարավորից:

Շախմատի օլիմպիադաներում Չինաստանի հավաքականը 2-րդ անգամ հաղթեց հայերին, որոնցից 2 պարտություն էր կրել: 2 մրցախաղում էլ գրանցվել է ոչ-ոքի:

Ռուսները 2,5-1,5 հաշվով հաղթելով ադրբեջանցիներին, 13 միավորով դարձան միանձնյա առաջատար: Վճռորոշ եղավ Գրիշչուկի հաղթանակը Սաֆարլիի նկատմամբ: Մյուս կարեւոր մրցախաղերի արդյունքներն այսպիսին են. Ֆիլիպիններ-Հունգարիա՝ 2-2, Ուկրաինա-Իսպանիա՝ 2,5-1,5, Մոլդովա-Գերմանիա՝ 1,5-2,5, Արգենտինա-Հնդկաստան՝ 2-2, ԱՄՆ-Թուրքիա՝ 3,5-0,5: 12-ական միավորով 2-րդ եւ 3-րդ տեղերում են Չինաստանն ու Ուկրաինան: Հայաստանը 8 հավաքականների հետ ունի 11 միավոր:

Հայաստանի կանանց հավաքականը 2,5-1,5 հաշվով հաղթեց իտալուհիներին: Մեր թիմի հաղթանակն ապահովեց վերջինն իր պարտիան ավարտած Մարիա Կուրսովան՝ պարտության մատնելով Մարիագրազիա դե Ռոսային: Ելենա Սեդինա-Էլինա Դանիելյան, Լիլիթ Մկրտչյան-Օլգա Զիմինա, Մարինա Բրունելո-Լիլիթ Գալոյան պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: ՀՀ հավաքականը վաստակեց 10 միավոր:

Կանանց մրցաշարում եռիշխանություն հաստատվեց: 2 առաջատարների՝ Ռուսաստանի եւ Լեհաստանի հավաքականների մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Նրանք վաստակեցին 12 միավոր: 2,5-1,5 հաշվով հաղթելով վրացիներին, Չինաստանը 12 միավորով հասավ առաջատարներին:

# Տղամարդկանց հավաքականի անդամները 100 ուժեղագույնների ցանկում են

Շախմատի Հայաստանի տղամարդկանց հավաքականի 5 անդամներն էլ տեղ են զբաղեցրել աշխարհի ուժեղագույն 100 շախմատիստների ցանկում: Սեպտեմբերի սկզբի դրությամբ հրապարակված ՖԻԴԵ-ի վարկանիշային աղյուսակում Լեւոն Արոնյանը պահպանել է 2-րդ հորիզոնականը: Անփոփոխ է մնացել նաեւ նրա 2816 վարկանիշը: Ցուցակը գլխավորող Մագնուս Կառլսենը վարկանիշը (2837) ավելացրել է 6-ով: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Վլադիմիր Կրամնիկը (2797), Թեյմուր Ռաջաբովը (2788), Հիկարու Նակամուրան (2783), Վիշվանաթան Անանդը (2780), Սերգեյ Կարյակինը (2778), Ֆաբիանո Կարուանան (2773), Վասիլի Իվանչուկն (2769) ու Ալեքսանդր Մորոզեւիչը (2758):

Արոնյանից հետո հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունի Սերգեյ Մովսիսյանը, որը 7-ով ավելացնելով վարկանիշը (2705), 46-րդ տեղից բարձրացել է 41-րդ հորիզոնական: Իսկ ահա Գաբրիել Սարգսյանը (2693) եւ Վլադիմիր Հակոբյանը (2687) պահպանել են իրենց վարկանիշները: Գաբրիելը 51-րդ տեղից նահանջել է 55-րդ հորիզոնական, իսկ Հակոբյանը՝ 58-ից 63-րդ: Որոշ հետընթաց է ունեցել նաեւ Տիգրան Պետրոսյանը, որը վարկանիշը նվազեցրել է 4-ով եւ 90-րդ տեղից նահանջել է 98-րդ հորիզոնական:

Հայաստանի կանանց հավաքականի միայն 2 անդամներ՝ Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանն են տեղ զբաղեցրել 100 ուժեղագույն շախմատիստուհիների ցանկում: Էլինան 2476 վարկանիշով 23-րդ տեղում է: Նա պահպանել է թե՛ վարկանիշը, թե՛ տեղը: Լիլիթ Մկրտչյանը պահպանելով վարկանիշը (2454), մեկ հորիզոնականով նահանջել ու զբաղեցնում է 35-րդ տեղը:

Կանանց վարկանիշային ցուցակի առաջատարն անփոփոխ է: Երկար տարիներ ցուցակը գլխավորում է հունգարուհի Յուդիթ Պոլգարը, որը հիմնականում հանդես է գալիս տղամարդկանց մրցաշարերում: Նրա վարկանիշը 2698 է: Լավագույն տասնյակում են նաեւ Աննա Մուզիչուկը (2606), Հոու Յիֆանը (2599), Համպի Կոներուն (2593), Չհաո Սյուեն (2549), Նանա Ձագնիձեն (2547), Կատերինա Լահնոն (2542), Յու Վենցզյունը (2528), Նադեժդա (2524) եւ Տատյանա (2524) Կոսինցեւա քույրերը:

100 ուժեղագույն պատանի շախմատիստների ցանկում տեղ են զբաղեցրել Սամվել Տեր-Սահակյանը (2580, 20-րդ տեղ), Կարեն Գրիգորյանը (2524, 38-րդ) եւ Հովհաննես Գաբուզյանը (2500, 47-րդ):

Հայաստանը միջին վարկանիշով (2660) ՖԻԴԵ-ի անդամ 153 երկրների շարքում 6-րդն է: Առջեւում են Ռուսաստանը (2742), Ուկրաինան (2703), Ֆրանսիան (2668), Հունգարիան (2661) եւ Չինաստանը (2661): Ադրբեջանը (2642) 9-րդն է, Վրաստանը (2600)՝ 16-րդը:

# Ռոնալդուն ցանկանում է հեռանալ «Ռեալից»



**Քրիշտիանու Ռոնալդուն վիրավորված է իր հանդեպ թիմակիցների վերաբերմունքից ու դժգոհ աշխատավարձի չափից, ուստի ցանկանում է հեռանալ «Ռեալից»: Այս մասին ֆուտբոլիստը տեղեկացրել է ակումբի ղեկավարությանը: Առաջնության 3-րդ տուրում 2 անգամ գրավելով «Գրանադայի» դարպասը, Ռոնալդուն այդպես էլ չնշեց խփած գոլերը: Շատերը դա բացատրում են խաղընկերների հետ լարված հարաբերություններով:**

**Իսպանական լրատվամիջոցների հաղորդման համաձայն Ռոնալդուին դուր չի եկել, որ խաղընկերներից շատերը Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի տիտղոսի գլխավոր հավակնորդ էին համարում թիմի դարպասապահ Իկեր Կասիլյասին: Հնարավոր է, որ հենց այդ մրցանակին չարժանանալն էլ ազդել է Ռոնալդուի տրամադրության վրա:**

**Բացի այդ, Ռոնալդուն դժգոհ է իր աշխատավարձի չափից: Նա «Մանչեսթր Յունայթեդից» «Ռեալ» էր տեղափոխվել 80 մլն ֆունտ ստեռլինգի դիմաց: Ակումբի հետ կնքած վեցամյա պայմանագրով Ռոնալդուն պետք է այդ ընթացքում տարեկան 11 մլն եվրո ստանար՝ դառնալով աշխարհում ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստը: Սակայն կամերունցի Սամուել Էտո'Օ-ն «Անժիում» Ռոնալդուից ավելի շատ է վաստակում (20 մլն եվրո): Մինչդեռ պորտուգալացի ֆուտբոլիստի պայմանագրում հստակ նշված է, որ մինչեւ ժամկետի ավարտը նա պետք է լինի աշխարհում ամենաբարձր վարձատրվող խաղացողը:**

**Թեեւ այս ամենին, դժվար թե Ռոնալդուն մոտ ժամանակներս հեռանա «Ռեալից», քանի որ նրա տրանսֆերային արժեքը մոտ 1 մլրդ եվրո է: Նման գումար չեն համաձայնվի վճարել նույնիսկ արաբական շեյխերը, որոնք 2 տարում քիչ ծախսեր չեն կատարել ՊՍԺ-ում:**

## ՖՈՒՏԲՈԼ

# Երիտասարդական հավաքականը պատրաստվում է վճռորոշ խաղին

**Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը այսօրվանից սկսում է նախապատրաստությունը սեպտեմբերի 10-ին Չեռնոգորիայի Պոդգորիցա քաղաքում այդ երկրի ընտրանու հետ կայանալիք ընտրական մրցախաղին: 2013-ի Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարի վերջին հանդիպումը վճռորոշ է մեր հավաքականի համար, որն առաջին անգամ իրական հնարավորություն է ստացել շարունակելու պայքարը եզրափակիչ փուլի ուղեգրի համար: Դրա համար մեր հավաքականին անհրաժեշտ է անպայման հաղթել չեռնոգորցիներին: Հիշեցնենք, որ ընտրական մրցաշարի մեկնարկային խաղում հայ ֆուտբոլիստները 10 հոգով Երեւանում 4-1 հաշվով ջախջախել էին մրցակցին: Հուսանք, որ այս անգամ էլ հաջողությունը կուղեկցի մեր ֆուտբոլիստներին:**

**Երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանն ուսումնամարզական հավաքի է հրավիրել 22 ֆուտբոլիստի, որոնց թվում է «Գանձասարի» դարպասապահ Արսեն Բեգլարյանը, որն իրեն լավ է դրսեւորում առաջնության հանդիպումներում: Հավաքականը Ավանի ակադեմիայի խաղադաշտում կմարզվի մինչեւ սեպտեմբերի 7-ը, իսկ հաջորդ օրը կուղեւորվի Պոդգորիցա:**

**Ահա թե ովքեր են հրավիրվել երիտասարդական հավաքական: Դարպասապահներ՝ Արսեն Բեգլարյան («Գանձասար»), Գոռ Էլյազյան («Իմպուլս»), Ալբերտ Օհանյան («Փյունիկ»): Պաշտպաններ՝ Տարոն Ոսկանյան («Փյունիկ»), Անդրանիկ Ոսկանյան («Միկա»), Գրիգոր Հովհաննիսյան («Փյունիկ»), Արամ Շահնազարյան («Բանանց»), Գագիկ Դաղբաշյան («Բանանց»), Հովհաննես Համբարձումյան («Բանանց»): Կիսապաշտպաններ՝ Նարեկ Գյոզալյան («Բանանց»), Մասիս Ոսկանյան (ԿՍՎ «Ռոզելար», Բելգիա), Կարեն Մուրադյան («Շիրակ»), Վարդգես Սաթումյան («Միկա»), Աղվան Պապիկյան (ԼԿՍ Լոձ, Լեհաստան), Արեգ Ազատյան («Միկա»), Նաիրի Մինասյան («Բանանց»), Էդգար Մալաքյան («Վիկտորիա», Պլզեն, Չեխիա), Գեւորգ Կարապետյան («Բանանց»), Գագիկ Պողոսյան («Փյունիկ»): Հարձակվողներ՝ Վիուլեն Այվազյան («Փյունիկ»), Գեւորգ Բադալյան («Բանիկ», Օստրավա, Չեխիա), Հովհաննես Հովհաննիսյան («Փյունիկ»):**

# Ավարտական տուրը կանվանի մրցանակակիրներին

**Ստամբուլում ավարտին է մոտենում մինչեւ 16 տարեկանների շախմատի օլիմպիադան: Այսօր կայանալիք 9-րդ տուրը կանվանի օլիմպիադայի մրցանակակիրներին:**

**Ցավոք, Հայաստանի պատանեկան հավաքականն այնքան էլ հաջող չի խաղում, թեեւ դեռ պահպանում է մրցանակակիր դառնալու որոշ հնարավորություն: Մեր պատանիները 8 տուրից հետո 18 միավորով ընթանում են 12-րդ տեղում: Նրանք կրկին անհաջող խաղացին՝ 1-3 հաշվով զիջելով հնդիկներին: Տիգրան Հարությունյանն ու Վլադիմիր Կանջարյանը պարտվեցին համապատասխանաբար Սունիլդուտ Նարայանանին եւ Լիեր Ակաշին, իսկ Մանուել Պետրոսյանն ու Նորայր Թորոսյանը հաշտություն կնքեցին Սայանթան Դասի ու Շարդուլ Գագարեի հետ:**

**23,5-ական միավորով առաջատարներն են Ռուսաստանի եւ Իրանի հավաքականները: Լավագույն եռյակը 20,5 միավորով եզրափակում է Հնդկաստանի ընտրանին:**

# Մեսիին երկարաժամկետ պայմանագիր կառաջարկվի




**Իսպանական «Բարսելոնը» մտադիր է Լիոնել Մեսիին մինչեւ ֆուտբոլային կարիերայի ավարտը նոր պայմանագիր առաջարկել: Այս մասին հայտարարել է ակումբի նախագահ Սանդրո Ռոսելը: Արգենտինացի ֆուտբոլիստը, որի տրանսֆերային արժեքը 250 մլն եվրո է, ժամանակին հայտարարել էր, որ ցանկանում է ֆուտբոլային կարիերան ավարտել իր հարազատ «Նյուլզ Օլդ Բոյզ» ակումբում, որի կազմում մինչեւ 11 տարեկանը խաղացել է:**

**Նոր, երկարաժամկետ պայմանագրի կնքումը շատ հավանական է, քանի որ լավ են հարաբերությունները ֆուտբոլիստի ներկայացուցիչների ու ակումբի ղեկավարության միջեւ: Ի դեպ, Մեսիի հայրը՝ Խորխեն մասնակցում է իր որդու գործարքների կնքմանը: Մեսին «Բարսելոնում» հայտնվեց 2004-ին 17 տարեկանում, իսկ մեկ տարի անց իր առաջին պրոֆեսիոնալ պայմանագիրը կնքեց: 2007-ին «Բարսելոնը» Մեսիի հետ երկարաժամկետ պայմանագիր կնքեց մինչեւ 2014-ը՝ ֆուտբոլիստի տրանսֆերը գնահատելով 150 մլն եվրո: 2009/10 մրցաշրջանի մեկնարկից առաջ ակումբը պայմանագիրը երկարաձգեց եւս 2 տարով, իսկ տրանսֆերային արժեքը հասավ 250 մլն եվրոյի: Նման գումար Մեսիին գնելու համար ընդունակ են վճարել միայն ՊՍԺ-ն ու «Մանչեսթր Սիթին», որոնց սեփականատերերն արաբական շեյխերն են:**

# Հայաստանից միայն «Շիրակը»

**Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան հրապարակել է աշխարհի ուժեղագույն 400 ակումբների հերթական ցանկը: Հայաստանից այդ ցանկում տեղ է զբաղեցրել միայն Գյումրիի «Շիրակը», որը 271 միավորով 326-րդ տեղում է: Նախորդ ամսվա ցանկում գյումրեցիները զբաղեցնում էին 362-րդ հորիզոնականը:**

**Աշխարհի ուժեղագույն ակումբների ցանկը գլխավորում է «Բարսելոնը»: 10 լավագույնների ցանկում են Չիլիի «Ունիվերսիդադը», Մադրիդի «Ռեալը», «Բոկա Խունիորսը», «Չելսին», Մադրիդի «Ատլետիկոն», Բիլբաոյի «Ատլետիկը», Մյունխենի «Բավարիան», Պարագվայի «Լիբերտադը» եւ բրազիլական «Կորինթիանսը»:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Արցախ. սկաուտական շարժման 3-րդ բանակումը

2012 թվականի օգոստոսի 8-15-ը Շուշի քաղաքում տեղի ունեցավ Արցախի «Հայկի սերունդ» երիտասարդական հասարակական կազմակերպության սկաուտական շարժման երրորդ բանակումը:

Օգոստոսի 8-ին տեղի ունեցած բանակումի բացման արարողությանը մասնակցում էին պետական բազմաթիվ պաշտոնյաներ, հոգեւոր հայրեր ու ծնողներ, ինչպես նաեւ Ստեփանակերտի, Շուշիի եւ Քաշաթաղի մասնաճյուղերը:



Արցախի սկաուտական շարժումն ունի երեք տարվա պատմություն եւ հովանավորվում է Արցախի պետության, հատկապես նախագահի կողմից, ինչը մեծ խթան է այս նորամանուկ շարժման զարգացման գործում:

Բանակումին մասնակցում էին նաեւ Հայաստանի անկախացումից հետո առաջին սկաուտական շարժման՝ «Հայկազուններ-Հայ արիներ» սկաուտական շարժման հիմնադիրներ, անդամներն ու պատասխանատուները: Բանակումի կազմակերպչական խմբում էին նաեւ Իրանից ժամանած փորձառու սկաուտ պատասխանատուներ, որոնք աշխատում էին իրենց փորձը փոխանցել Արցախի նորակառույց սկաուտական շարժմանը:

Բանակումը տեղի ունեցավ Շուշի քաղաքի նախկին Գագարինի անվան պիոներական ճամբարի տարածքում, որտեղ ոչ մի շինություն չկա: Տարածքն ազատ էր, ծառաշատ գեղեցիկ բնությամբ ու կուսական անտառով: Սկաուտները մեկ շաբաթ բնակվեցին վրաններում: Նրանց առօրյան սկսվում էր մարզանքով, ստուգայցով, որտեղ խմբակները ստանում էին գնահատականներ, իսկ ամենաբարձր գնահատականը «Հաղթող դրոշակին» արժանանալն էր: Օրվա աշխատանքների բացման արարողությունից հետո մեկնարկում էին սկաուտական գիտելիքների դասընթացները, խաղերը, պարերը, երգերը, մրցույթները, արշավները, օրն ավարտվում էր 21.30-ի խառույկահանդեսով:

«Հայկի սերունդ» կազմակերպությունը նպատակադրել է այս բանակավայրը դարձնել համահայկական սկաուտական եւ երիտասարդական ճամբար, որից կարող են օգտվել ոչ միայն Արցախի ու Հայաստանի սկաուտներն ու երիտասարդները, այլ նաեւ սփյուռքահայ երիտասարդությունն ու սկաուտները: Բանակավայրը կարող է ծառայել նաեւ որպես տարածաշրջանի երիտասարդական տարբեր բնույթի ճամբարների կենտրոն: Նրանք նախապատրաստում են այս բանակավայրի շինությունների ու տարածքի դասավորման նախագիծը, որը ներկայացվելու է տարբեր հովանավորների: Ցանկացողներն իրենց կարողության չափով կարող են օգնել, աստիճանաբար ստեղծել հնարավորություններ, որպեսզի այս վայրն օգտագործվի ամբողջ տարվա ընթացքում: Յուրաքանչյուր հովանավոր կարող է օժանդակել կառուցելու որեւէ շինություն, օրինակ՝ խոհանոց, պահեստ, խաղադաշտ եւ այլն: Այդ օբյեկտները կկրեն հովանավորների անունները: Կազմակերպությունը հույս ունի, որ սփյուռքի, Հայաստանի ու Արցախի բարերարները կնպաստեն այս ազգօգուտ եւ նոր սերնդի դաստիարակման համար կարեւոր գործին:

Օգոստոսի 15-ին բանակումն ավարտվեց: Փակման արարողությունը նույնպես մեծ հանդիսավորությամբ նշվեց: Մասնակցում էին պետական բազմաթիվ պաշտոնյաներ, հոգեւոր հայրեր ու ծնողներ:

Փակման արարողության ընթացքում որոշ սկաուտներ ստացան լավագույն սկաուտի վկայագրեր, Իրանի եւ Երեւանի պատասխանատուները ստացան շնորհակալագրեր՝ աջակցության համար:

Իրանից ժամանած **Ռուբիկ Սարդարյանը**՝ որպես Արցախում սկաուտական շարժման հիմնադիրներից մեկը եւ սկաուտական շարժման խորհրդատու, Արցախի Հանրապետության հռչակման 20-ամյակի կապակցությամբ, արժանացավ պետական ոսկե հուշամեդալի:

Բանակումի փակումից հետո սկաուտական շարժման սկաուտապետը, պատասխանատուները եւ որոշ խմբակների պատասխանատուներ սփյուռքում սկաուտական շարժման հետ ծանոթանալու եւ դասընթացներ անցկացնելու նպատակով օգոստոսի 21-ին մեկնեցին Թեհրան:

Հաջողություն ենք մաղթում այս նորամանուկ շարժման ակտիվիստներին:

Դիմում ենք բոլոր բարերարներին ու սկաուտական փորձառու պատասխանատուներին՝ հնարավորությունների սահմաններում օգտավետ լինել Արցախում սկաուտական շարժման զարգացմանն ու տարածմանը:

Ռ. Ս.

# Ողջի գետի աղտոտումը շրջակա միջավայրին պատճառել է 2 միլիոն դրամի վնաս

Բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական տեսչությունը Ողջի գետի շրջակայքում կատարած եռօրյա ստուգումներով ու շրջայցերով հայտնաբերել է բազմաթիվ խախտումներ: Բնապահպանական տեսչությունը վերոնշյալ խախտումների ու տարածքային բաժինների վարույթին հանձնված գործերով վարչական տուգանքի 10 որոշում է կայացրել. շրջակա միջավայրին հասցված վնասը գնահատվել է 2.01 միլիոն դրամ:

100.000 դրամ տուգանք մթնոլորտի վերահսկողության բաժնին, 430.000 դրամ կամ վարչական տուգանքի չորս որոշում ջրերի վերահսկողության բաժնին: Անտառների վերահսկողության բաժնի կողմից «Հայանտառ ՊՈԱԿ»-ի Կապանի մասնաճյուղի ստուգմամբ բնությանը հասցված վնասը գնահատվել է 171.000 դրամ: Խախտումներ են արձանագրվել նաեւ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունն ուսումնասիրելիս: Ստուգումներով պարզվել է, որ տարածքում իրականացվել է նաեւ ապօրինի որս: Մասնավորապես առգրավվել են 147 լոր, 4 կգ խեցգետին, որոնք բաց են թողնվել:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության պոչամբարի հետեւանքով Ողջի գետի աղտոտման համար էլ շրջակա միջավայրին հասցված վնասը հաշվարկվել է 294.000 դրամ գումար:

Հ. Հ.


**«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր**

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

▼ **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն**

▼ **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք*
*54-24-81, 54-74-81*


## ՄՈՐԶԵԻ ՍԱՐՔ

# Հեռագիրը 175 տարեկան է



Աշխարհում առաջին հեռագիրն ուղարկվել է ԱՄՆ-ում 175 տարի առաջ՝ Վաշինգտոնի եւ Բալթիմորի միջեւ անցկացված հեռագրային մալուխով հաղորդվել է Աստվածաշնչի տողերից մեկը:

Այդ գծի կառուցումը ֆինանսավորել էր ԱՄՆ Կոնգրեսը: Տեղադրվել էին Սեմյուել Մորզեի սարքերը: Ամերիկացի մեծ գյուտարարը այդ ժամանակ 54 տարեկան էր: Հեռագրասարքից բացի, գյուտարարը մշակեց եւ կիրառեց կետերով ու գծերով կոդավորված տեղեկատվության հաղորդումը: Մինչեւ օրս կապավորները բանակում եւ նավատորմում առաջին հերթին օգտվում են Մորզեի այբուբենից:

Ժամանակակիցները հեռագրասարքն անվանում էին 19-րդ դարի մեծագույն գյուտ: Կապի զարգացման մեջ նոր դարաշրջան բացած Մորզեն նախապես սարքի վրա աշխատանքը համարում էր «պարապ վախտի խաղալիք»: Նրա հիմնական զբաղմունքը գեղանկարչությունն էր: Նա պրոֆեսիոնալ նկարիչ էր, դասավանդում էր Նյու Յորքի համալսարանում: Նաեւ վաճառում էր նկարներ եւ ստեղծում հարուստ հաճախորդների դիմանկարներ:

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին**

Առաջատար պաշտոններ / փակ մրցույթ /

1. **ՀՀ ԿԱ ՊԵԿ Գերատեսչական հսկողության վարչության Հարկային մարմնի համալիր ստուգումների բաժնի հարկային տեսուչ – 1 հաստիք**

1-ին կետում նշված պաշտոնը զբաղեցնող աշխատակիցը իրականացնում է հարկային տեսչություններում համալիր ստուգումներ, հարկային ծառայության մասով բիզնես-գործընթացների գնահատում, հարկային տեսչությունների կողմից իրականացված աշխատանքների արդյունքային ցուցանիշների վերլուծություն /հսկողական, վերահսկողական աշխատանքների փորձը, հաշվապահական հաշվառման իմացությունը, համակարգչային եւ վերլուծական կարողությունները պարտադիր են/:

2. **ՀՀ ԿԱ ՊԵԿ Գերատեսչական հսկողության վարչության Հարկային մարմնի տեսչական ստուգումների բաժնի ավագ հարկային տեսուչ – 1 հաստիք**

2-րդ կետում նշված պաշտոնը զբաղեցնող աշխատակիցը իրականացնում է հարկային տեսչություններում տեսչական ստուգումներ, հարկային ծառայության մասով բիզնես-գործընթացների գնահատում, հարկային տեսչությունների կողմից իրականացված աշխատանքների արդյունքային ցուցանիշների վերլուծություն եւ օրենքով սահմանված այլ հսկողական (վերահսկողական) աշխատանքներ:

Նշված պաշտոնները համալրելու համար կազմակերպվող փակ մրցույթին կարող են մասնակցել հարկային ծառայողները եւ ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 3-ի «Հարկային ծառայության պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 2167-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկում նախատեսված մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, վերահսկողական եւ համակարգչային անհրաժեշտ հմտություններ ունեցող, հաշվապահական հաշվառման իմացությամբ, 3 տարվա մասնագիտական ստաժ ունեցող ՀՀ քաղաքացիները:

**Դիմորդները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը**

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով եւ հայտարարություն «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքով հարկային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ (Ձեւերը լրացվում են փաստաթղթերը ներկայացնելիս:).
- անձնագրի պատճենը, տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների) եւ աշխատանքային գրքույկի պատճենները՝ մասնագիտական վերապատրաստման վկայականների եւ հավաստագրերի պատճենները
- արական սեռի անձինք՝ նաեւ զինգրքույկի կամ դրան փոխարինող փաստաթղթի պատճենը
- երկու գունավոր լուսանկար՝ 3 X 4 սմ չափսի:

**Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:**

**Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00 -ից մինչեւ 13:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:**

***Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 24.09.2012թ. ժամը 13:00:***

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ ԿԱ ՊԵԿ մրցութային հանձնաժողով / Երեւան, Մ.Խորենացի փողոց շ.7, հեռ. 060 54-46-27, 060 54-46-28, 060 54-46-30, 060 54-46-32 /:

***Մրցույթը կանցկացվի 04.10.2012թ. ժամը 09 30, Արաբկիրի հարկային տեսչության շենքում՝ ք.Երեւան, Կոմիտասի 35 :***

Մրցույթի անցկացման վայրի, օրվա եւ ժամի հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ կիրապարակվի մամուլում եւ ՀՀ ԿԱ ՊԵԿ ինտերնետային կայքում՝ մրցույթից առնվազն երկու շաբաթ առաջ:

Մրցույթի հարցաշարը կտրամադրվի ՀՀ ԿԱ ՊԵԿ Անձնակազմի կառավարման վարչությունում էլեկտրոնային կրիչով:

***ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության մրցութային եւ ատեստավորման հանձնաժողով***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 4.9.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: